

ԱՖՐԻԿԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐԵՎՍՏԱԱՍԻԱԿԱՆ ՋՐԱՅԻՆ ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Համաձայնագրի տեքստը`

Պայմանավորվող Կողմերը`

Հիշեցնելով, որ Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանման կոնվենցիան (1979 թ.) խրախուսում է միգրացվող տեսակների պահպանման միջազգային համագործակցությունը.

Այնուհետև հիշեցնելով, որ 1985 թ. հոկտեմբերին Բոննում կայացած Կոնվենցիայի կողմերի կոնֆերանսի առաջին համաժողովը հրահանգավորեց Կոնվենցիայի Քարտուղարությանը համապատասխան միջոցներ ձեռնարկել Արևմտյան Պալեարկտիկայի բաղազգիների Համաձայնագրի մշակման համար.

Հաշվի առնելով, որ միգրացվող ջրային թռչունները կազմում են գլոբալ կենսաբանական բազմազանության կարևորագույն մաս, որը, ելնելով Կենսաբանական բազմազանության 1992 թ. կոնվենցիայի ոգուց և Օրակարգ 21-ից, պետք է պահպանվի` ելնելով ներկա և ապագա սերունդների շահերից.

Լինելով իրազեկ միգրացվող ջրային թռչունների առանձին տեսակների տնտեսական, սոցիալական, մշակութային և ռեկրեացիոն արժեքների մասին և ընդհանրապես ջրային թռչունների միջավայրային, գենետիկական, գիտական, էսթետիկական, ռեկրեացիոն, մշակութային, կրթական, սոցիալական և տնտեսական արժեքների մասին.

Հանդգլած լինելով, որ միգրացվող ջրային թռչունների ցանկացած հավաք պետք է իրականացվի կայուն հիմքերով, հաշվի առնելով տվյալ տեսակների պահպանման կարգավիճակը, իրենց ամբողջ տարածվածությունը, ինչպես նաև դրանց կենսաբանական հատկանիշերը.

Գիտակցելով, որ միգրացվող ջրային թռչունները առանձնապես խոցելի են, քանի որ դրանք չվում են երկար հեռավորություններ և կախյալ են խոնավ տարածքների ցանցից, որոնք, ինչպես նշում է Միջազգային կարևոր նշանակություն ունեցող խոնավ տարածքների, հատկապես որպես ջրային թռչունների բնակավայր կոնվենցիան (1971 թ.), մարդկային ոչ կայուն գործունեության հետևանքով կրճատվում և դեգրադացվում են.

Ճանաչելով միգրացվող ջրային թռչունների տեսակների և դրանց բնակավայրերի նվազումը կանգնեցման անհապաղ գործողություն ձեռնարկելու կարիքը Աֆրիկա-Եվրասիական աշխարհագրական տարածքի ջրային թռչունների միգրացիաների համակարգում.

Գիտակցելով, որ բազմակողմանի Համաձայնագրի կնքումը և դրա իրականացումը համակարգված կամ համաձայնեցված գործողության միջոցով նշանակալիորեն կաջակցի միգրացվող ջրային թռչունների և դրանց բնակավայրերի առավել արդյունավետ պահպանմանը և կունենա օժանդակ առավելություններ բազմաթիվ այլ կենդանիների ու բույսերի տեսակների համար. և

Գիտակցելով, որ այսպիսի Համաձայնագրի արդյունավետ իրականացումը կպահանջի տարածքի որոշ պետությունների համար միգրացվող ջրային թռչունների տեսակների և դրանց բնակավայրերի հետազոտության, ուսուցման և մոնիտորինգի, այդ բնակավայրերի կառավարման, ինչպես նաև սույն համաձայնագրի իրականացման համար գիտական կամ ադմինիստրատիվ ինստիտուտների հիմնադրման կամ բարելավման համար օժանդակություն.

Համաձայնության եկան հետևյալի շուրջ.

Ռոզված I. Շրջանակը, սահմանումները և մեկնաբանումը

1. Սույն Համաձայնագրի աշխարհագրական շրջանակը Աֆրիկա-Եվրասիական ջրային թռչունների միգրացիոն համակարգերի տարածքն է, ինչպես դա նկարագրված է սույն համաձայնագրի 1 Հավելվածում, այսուհետ «Համաձայնագրի տարածք»:

2. Սույն Համաձայնագրի նպատակների համար`

- (ա) «Կոնվենցիա» նշանակում է Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին կոնվենցիա (1979 թ.).
 - (բ) «Կոնվենցիայի քարտուղարություն» նշանակում է Կոնվենցիայի IX հոդվածին համաձայն հիմնված մարմին.
 - (գ) «Ջրային թռչուն» նշանակում է այն թռչունների տեսակները, որոնք էկոլոգիապես կախված են խոնավ տարածքներից առնվազն իրենց տարեկան կյանքի ընթացքի մի մասով, ունեն տարածում, որը լիովին կամ մասամբ ընկնում է սույն Համաձայնագրի տարածքի մեջ և թվարկված են սույն համաձայնագրի 2 Հավելվածում.
 - (դ) «Համաձայնագրի քարտուղարություն» նշանակում է սույն համաձայնագրի VI հոդվածի 7-րդ կետի (բ) ենթակետով հիմնված մարմին.
 - (ե) «Կողմեր» նշանակում է սույն համաձայնագրի կողմեր, մինչ կոնտեքստում այլ կերպ կնշվի.
 - (զ) «Ներկա և քվեարկող Կողմեր» նշանակում է Կողմեր ներկայացնող և վճռորոշ հաստատական կամ բացասական ձայն կայացնող. քվեարկությունից ձեռնպահ մնացողները չեն ընդգրկվում ներկա և քվեարկող Կողմերի մեջ:
- Ի հավելումն, սույն Համաձայնագրում Կոնվենցիայի I հոդվածի 1 (ա)-ից մինչև (ժա) ենթաբաժիններով սահմանված արտահայտությունները պետք է ունենան համապատասխան նույն իմաստը:

3. Սույն Համաձայնագիրը ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ է, որի իմաստը ներառված է Կոնվենցիայի IV Հոդվածի 3 բաժնում:

4. Սույն Համաձայնագրի հավելվածները կազմում են դրա անբաժանելի մասը: Ցանկացած հղում սույն Համաձայնագրին ներառում է հղում դրա հավելվածներին:

Հոդված II. Հիմնական սկզբունքներ

1. Կողմերը պետք է ձեռնարկեն համակարգված միջոցներ միգրացվող ջրային թռչունների տեսակներին բարենպաստ պահպանողական կարգավիճակում պահպանելու կամ դրանց մինչ այդ կարգավիճակին վերականգնելու համար: Սույն կերպ, դրանք պետք է գործադրեն իրենց ազգային օրենսդրության սահմաններում III հոդվածով սահմանված միջոցներ, սույն Համաձայնագրի IV հոդվածում ներառված գործողությունների պլանում սահմանված հատուկ գործողությունների հետ միասին:

2. Վերը նշված 1 բաժնի միջոցները իրականացնելիս կողմերը պետք է հաշվի առնեն կանխագուշակական սկզբունքը:

Հոդված III. Պահպանման ընդհանուր չափանիշեր

1. Կողմերը միգրացվող ջրային թռչունների պահպանման համար պետք է միջոցներ ձեռնարկեն, հատուկ ուշադրություն դարձնելով վտանգված տեսակներին, ինչպես նաև նրանց, որոնք գտնվում են անբարենպաստ պահպանման կարգավիճակում:

2. Այսպիսով, Կողմերը պետք է՝

- (ա) սույն Համաձայնագրի տարածքում վտանգված ջրային թռչունների միգրացվող տեսակների համար համապատասխանացնեն նույնպիսի խստապահանջ պահպանություն, ինչպես որ սահմանված է Կոնվենցիայի III Հոդվածի 4 և 5 բաժիններում.
- (բ) երաշխավորեն, որ միգրացվող ջրային թռչունների ցանկացած օգտագործում հիմնված է իրենց էկոլոգիայի գնահատման լավագույն հնարավոր գիտելիքների վրա և կայուն է տեսակների, ինչպես նաև դրանց աջակցող էկոլոգիական համակարգերի համար.
- (գ) որոշեն իրենց տարածքում միգրացվող ջրային թռչունների տարածքները և բնակավայրերը և քաջալրեն այդ տեղերի պահպանությունը, կառավարումը, կարգավորումը և վերականգնումը սույն Համաձայնագրի IX Հոդվածի (ա) և (բ) բաժիններում թվարկված բնակավայրերի պահպանման հետ առնչվող մարմինների հետ համատեղ.
- (դ) համակարգեն իրենց ջանքերը որպեսզի երաշխավորեն, որ պիտանի բնակավայրերի ցանցը պահպանվում է կամ, որտեղ հնարավոր է, վերահիմնված է ամբողջ տարածման շրջանով միգրացվող ջրային թռչունների յուրաքանչյուր տեսակի, մասնավորապես որտեղ խոնավ տարածքները ընդարձակվում են սույն Համաձայնագրի ավելին քան մեկ կողմի տարածքով.
- (ե) ուսումնասիրեն խնդիրները, որոնք առաջացել են մարդկային գործունեություններից կամ հավանաբար կարող են առաջանալ և ձգտեն իրականացնել ապաքինող միջոցներ, ներառյալ

բնակավայրի կարգավորումը և վերականգնումը և բնակավայրի վնասի փոխհատուցման միջոցները.

- (զ) համագործակցեն միջազգային համաձայնեցված գործողություն պահանջող արտակարգ իրավիճակներում և միգրացվող ջրային թռչունների տեսակների պարզաբանմանը, որոնք սույն իրավիճակներում առավել խոցելի են, ինչպես նաև համագործակցեն արտակարգ իրավիճակների համապատասխան մեխանիզմների մշակմանը նման իրավիճակներում սույն տեսակների պահպանման ապահովվածության բարձրացման համար և սույն իրավիճակներում անհատ Կողմերին ուղեցույցների պատրաստման օժանդակման գործընթացում.
- (է) արգելեն ոչ բնական ջրային թռչունների տեսակների մտադրված ներմուծումը շրջակա միջավայր և այդ տեսակների ոչ միտումնավոր ազատ արձակման կանխման համար ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցներ, եթե այդ ներմուծումը կամ ազատ արձակումը կարող է վնաս հասցնել վայրի ֆլորայի և ֆաունայի պահպանման կարգավիճակին: Երբ ջրային թռչունների ոչ բնական տեսակները արդեն իսկ ներկայացվել են, կողմերը պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի պաշտպանեն բնիկ տեսակներին սույն պոտենցիալ վտանգ հարուցող տեսակներից, .
- (ը) նախաձեռնեն կամ աջակցեն միգրացվող ջրային թռչունների կենսաբանության և էկոլոգիայի հետազոտությունը, ներառյալ հետազոտության և մոնիտորինգի մեթոդների հարմոնիզացիան, և որտեղ հնարավոր է, հիմնել համակցված կամ համատեղ ծրագրեր.
- (թ) վերլուծեն իրենց ուսուցման պահանջները, այդ թվում՝ միգրացվող ջրաթռչունների հետազոտությունների, մոնիտորինգի, օդանշման և խոնավ տարածքների կառավարման՝ ուսուցման առաջնային թեմաների և տարածքների որոշման, և համապատասխան ուսուցման ծրագրերի մշակման և ապահովման.
- (ժ) մշակեն և օժանդակեն միգրացվող ջրային թռչունների պահպանման հիմնախնդիրների իրազեկման բարձրացման և ընկալման ծրագրեր ընդհանրապես և մասնավորապես սույն համաձայնագրի նպատակների և դրույթների համար.
- (ժա) իրականացնեն հետազոտությունների, մոնիտորինգի, պահպանման և կրթական ծրագրերի արդյունքների և տեղեկատվության փոխանակում, և
- (ժբ) սույն Համաձայնագրի իրականացմանը աջակցելու նպատակով միմյանց հետ համագործակցեն, մասնավորապես հետազոտության և մոնիտորինգի ոլորտներում:

Յոթերորդ Կրկնաբաժին IV

Գործողության ծրագիր և պահպանման ուղեցույցեր

1. Գործողության ծրագիրը կցված է սույն Համաձայնագրին որպես Հավելված III: Դա հատկորոշում է այն գործողությունները, որոնք Կողմերը պետք է ձեռնարկեն կապված առաջնային տեսակների և հիմնախնդիրների հետ՝ համապատասխան սույն Համաձայնագրի III Հավելվածում հատկորոշված ընդհանուր պահպանման չափանիշերի հետևյալ վերնագրերով՝

- (ա) տեսակներ պահպանում.
- (բ) բնակավայրի պահպանում.
- (գ) մարդկային գործողությունների կառավարում.
- (դ) հետազոտություն և մոնիտորինգ.
- (ե) կրթություն և տեղեկատվություն, և
- (զ) իրականացում:

2. Գործողության ծրագիրը պետք է վերանայվի Կողմերի ժողովի յուրաքանչյուր հերթական նիստում՝ հաշվի առնելով պահպանման ուղեցույցերը:

3. Գործողության ծրագրի ցանկացած լրացում պետք է ընդունվի Կողմերի ժողովի կողմից՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի III Հավելվածի դրույթները:

4. Պահպանման ուղեցույցերը պետք է ներկայացվեն Կողմերի ժողովի՝ իր առաջին նիստում ընդունման համար և պետք է պարբերաբար վերանայվեն:

Յոթերորդ Կրկնաբաժին V. Իրականացում և Ֆինանսավորում

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է՝

- (ա) սույն համաձայնագրի իրականացման համար նշանակի Լիազոր(-ներ), որը այդ թվում պետք է իրականացնի բոլոր այն գործունեությունների դիտանց, որոնք կարող են ազդեցություն

ունենալ այն միզրացվող ջրային թռչունների տեսակների պահպանման կարգավիճակի վրա, որոնց համար Կողմը հանդիսանում է տարածման պետություն:

- (բ) նշանակի այլ կողմերի համար շփման մարմին և առանց ուշացման հաղորդակցվի Համաձայնագրի քարտուղարությանը դրա՝ անվանումը և հասցեն այլ կողմերին հաղորդակցելու համար, և
 - (գ) Կողմերի ժողովի յուրաքանչյուր հերթական նիստի համար, սկսած երկրորդ նիստից, պատրաստի գեկույց, իր կողմից համաձայնագրի իրականացման վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ձեռնարկված պահպանման միջոցներին: Սույն գեկույցի ձևը պետք է որոշվի Կողմերի ժողովի առաջին նիստում և անրաժեշտության դեպքում վերանայվի Կողմերի ժողովի ցանկացած հաջորդող նիստի ընթացքում: Յուրաքանչյուր գեկույց պետք է ներկայացվի Կողմերի քարտուղարությանը ոչ ուշ քան հարյուր քսան օր առաջ մինչ Կողմերի ժողովի հերթական նիստը, որի համար դա պատրաստվել է, և օրինակները պետք է անմիջապես Կողմերի քարտուղարության կողմից տարածվեն այլ կողմերին:
2. (ա) Յուրաքանչյուր Կողմ պետք է ներդրում կատարի Համաձայնագրի բյուջեին համապատասխան Միացիալ Ազգերի Կազմակերպության գնահատման սանդղակի: Յուրաքանչյուր Կողմ տարածքի պետության համար ներդրումները պետք է սահմանափակվեն ընդհանուր բյուջեի առավելագույնս 25 տոկոսով: Ոչ մի տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպությունից չի պահանջվի ադմինիստրատիվ արժեքի 2,5 տոկոսից ավելի ներդրում կատարել:
- (բ) Բյուջեի կամ գնահատման սանդղակի հետ կապված ցանկացած փոփոխության որոշումները, որոնք կարող են լինել անհրաժեշտ, պետք է ընդունվեն Կողմերի ժողովի ընդհանուր համաձայնությամբ:
3. Կողմերի ժողովը, Կողմերի ինքնակամ ներդրումներից կամ ցանկացած այլ աղբյուրից, կարող է հիմնել պահպանման հիմնադրամ դիտանցի, հետազոտությունների, ուսուցման և պահպանման ծրագրերի, ներառյալ միզրացվող ջրային թռչունների պահպանության և կառավարման ֆինանսավորման համար:
4. Կողմերը խրախուսվում են բազմակողմ կամ երկկողմ հիմունքներով ապահովել այլ կողմերին ուսուցման և տեխնիկական ու ֆինանսական աջակցություն սույն Համաձայնագրի դրույթների իրականացման համար:

Ռոդված VI. Կողմերի ժողով

1. Կողմերի ժողովը պետք է լինի սույն Համաձայնագրի որոշում կայացնող մարմինը:
2. Ավանդապահը, խորհրդակցելով Կոնվենցիայի քարտուղարության հետ, սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան մեկ տարի անց, հրավիրում է Կողմերի ժողովի նիստ: Համաձայն դրան, Համաձայնագրի քարտուղարությունը, խորհրդակցելով Կոնվենցիայի քարտուղարության հետ, պարտավոր է հրավիրել երեք տարին չգերազանցող պարբերականությամբ Կողմերի ժողովի հերթական նիստեր այնքան ժամանակ, մինչ կողմերի ժողովը որոշի այլ կերպ: Երբ դա հնարավոր է, նման նիստերը պետք է հանդնկնեն Կոնվենցիայի կողմերի կոնֆերանսի ժողովների հետ:
3. Կողմերի ոչ պակաս քան մեկ երրորդի գրավոր պահանջի հիման վրա Համաձայնագրի քարտուղարությունը պարտավոր է հրավիրել Կողմերի ժողովի արտահերթ նիստ:
4. Միացյալ Ազգերի Կազմակերպությունը, դրա մասնագիտացված գործակալությունները, Համաշխարհային Ատոմային էներգիայի գործակալությունը, Համաձայնագրի ցանկացած կողմ չհանդիսացող պետություն և միջազգային կոնվենցիաների քարտուղարություններ, որոնք մտահոգ են միզրացվող ջրային թռչունների պահպանությանը և կառավարմանը, Կողմերի ժողովի նիստին կարող են ներկայացվել դիտորդներով: Ցանկացած գործակալություն կամ միզրացվող ջրային թռչունների պահպանման գործերով կամ ջրային թռչունների հետազոտությամբ տեխնիկապես որոկավորված մարմին կարող է ևս ներկայացվել դիտորդներով Կողմերի համաժողովին այնքան ժամանակ, մինչ Կողմերի ոչ պակաս քան մեկ երրորդը ներկայացնեն առարկություն:
5. Միայն Կողմերը ունեն ձայնի իրավունք: Յուրաքանչյուր Կողմ պետք է ունենա մեկ ձայն, սակայն տարածաշրջանային ինտեգրացիոն կազմակերպությունները, որոնք հանդիսանում են սույն

Համաձայնագրի Կողմ, պետք է օգտվեն այնքան ձայնի իրավունքից, որքան քանակի նրա անդամ երկրները հանդիսանում են Համաձայնագրի Կողմ և ընդհակառակը:

6. Եթե սույն Համաձայնագրում այլ կերպ չի ձևակերպված, Կողմերի ժողովի որոշումները պետք է ընդունվեն ընդհանուր համաձայնության հիմունքներով, իսկ եթե ընդհանուր համաձայնությամբ հնարավոր չի եղել հասնել, ապա ներկա և քվեարկող Կողմերի մեծամասնության երկու երրորդով:

7. Իր առաջին նիստում Կողմերի ժողովը պետք է՝

- (ա) ընդհանուր համաձայնության հիմունքներով ընդունի իր ընթացակարգի կանոնները.
- (բ) սույն Համաձայնագրի VIII հոդվածում թվարկված գործառնությունների իրականացման համար Կոնվենցիայի քարտուղարության ներսում հիմնի Համաձայնագրի քարտուղարություն.
- (գ) հիմնի սույն համաձայնագրի VII հոդվածում նշված Տեխնիկական կոմիտեն.
- (դ) համաձայն սույն Համաձայնագրի V հոդվածի 1 բաժնի (գ) ենթաբաժնի ընդունի զեկույցների պատրաստման ֆորմատը, և
- (ե) ընդունի պահպանման անհետաձգելի միջոցների ձեռնարկում պահանջող արտակարգ իրավիճակների որոշման չափանիշերը, և սահմանի իրականացվելիք գործողության աջակցման պարտավորությունների միջոցները:

8. Իր յուրաքանչյուր հերթական նիստին Կողմերի համաժողովը պետք է՝

- (ա) քննարկի միգրացվող ջրային թռչունների և նրանց բնակավայրերի գոյատևման պահպանման կարգավիճակի իրական ու հնարավոր փոփոխությունները, ինչպես նաև դրանց վրա հնարավոր ազդություն ունեցող .
- (բ) դիտարկի սույն Համաձայնագրի իրականացման ընթացքի առաջընթացը և ցանկացած խոչընդոտող բախում.
- (գ) ընդունի բյուջեն և քննարկի սույն Համաձայնագրի ֆինանսական կարգավորման հետ կապված ցանկացած հարց.
- (դ) քննարկի Համաձայնագրի քարտուղարության և Տեխնիկական հանձնաժողովի անդամակցության հետ կապված ցանկացած խնդիր.
- (ե) ընդունի սույն Համաձայնագրի Կողմերին և Կոնվենցիայի կողմերի կոնֆերանսին ներկայացվող հաշվետվությունը, և
- (զ) սահմանի հաջորդ նիստի տեղը և ժամկետը:

9. Իր ցանկացած նիստում Կողմերի ժողովը կարող է՝

- (ա) տրամադրել առաջարկություններ Կողմերին, երբ դա համարում է անհրաժեշտ և հարմար.
- (բ) ընդունել հատուկ գործողություններ սույն Համաձայնագրի արդյունավետության բարձրացման համար և, եթե հարկ լինի, արտատարգ իրավիճակների գործողություններ, ինչպես նշված է սույն Համաձայնագրի VII հոդվածի 3 բաժնում.
- (գ) քննարկել և որոշում կայացնել առաջարկությունների հիման վրա սույն Համաձայնագրում լրացումներ կատարելու վերաբերյալ.
- (դ) գործողությունների ծրագրում կատարել լրացումներ համապատասխան սույն Համաձայնագրի VII հոդվածի 3 բաժնի.
- (ե) երբ դա համարվում է անհրաժեշտ, հիմնել այնպիսի օժանդակ մարմիններ, որոնք կցուցաբերեն աջակցություն Համաձայնագրի իրականացման ընթացքում, մասնավորապես աշխարհագրական և տաքսոնոմիական դիրքով փոխհամընկնող միջազգային պայմանագրերի, կոնվենցիաների և համաձայնագրերի ներքո ստեղծված մարմինների հետ համակարգման համար.
- (զ) որոշել ցանկացած այլ գործողություններ՝ կապված սույն Համաձայնագրի իրականացման հետ:

Ռոդված VII. Տեխնիկական հանձնաժողով

1. Տեխնիկական հանձնաժողովը պետք է բաղկացած լինի՝

- (ա) Համաձայնագրի տարածքը աշխարհագրական համաչափ բախշվածության տարբեր տարածաշրջանները ներկայացնող ինը փորձագետներից.
- (բ) մեկ ներկայացուցիչ Բնության և բնական պաշարների պահպանման միջազգային միությունից (IUCN), մեկ՝ Զրային թռչունների և խոնավ տարածքների միջազգային հետազոտական գրասենյակից (IWRB) և մեկ՝ որսի և վայրի աշխարհի պահպանության միջազգային խորհուրդից (CIC).
- (գ) մեկական փորձագետ հետևյալ յուրաքանչյուր ոլորտներից՝ գյուղատնտեսություն, որսի կառավարում և բնապահպանական իրավունք:

Փորձագետների նշանակման կանոնակարգը, նրանց նշանակման ժամանակահատվածը և տեխնիկական հանձնաժողովի նախագահի նշանակման կանոնակարգը պետք է սահմանվի Կողմերի համաժողովի կողմից: Նախագահը կարող է ընդունել առնվազն չորս դիտորդ միզագազային միջկառավարական կամ հասարակական մասնագիտացված կազմակերպություններից:

2. Մինչ Կողմերի ժողովը չորոշի այլ կերպ, տեխնիկական հանձնաժողովի հանդիպումները պետք է գումարվեն սույն Համաձայնագրի քարտուղարության կողմից հարակցված Կողմերի ժողովի յուրաքանչյուր նիստի հետ համատեղ և առնվազն մեկ անգամ Կողմերի ժողովի հերթական նիստերի միջև:

3. Տեխնիկական հանձնաժողովը պետք է՝

- (ա) ապահովի Կողմերի ժողովը գիտական և տեխնիկական խորհրդատվությամբ և տեղեկատվությամբ և, Համաձայնագրի քարտուղարության միջոցով՝ Կողմերին.
- (բ) կատարի առաջարկություններ Կողմերի ժողովին գործողությունների ծրագրի, սույն Համաձայնագրի իրականացման և ապագա հետազոտությունների վերաբերյալ.
- (գ) պատրաստի կողմերի ժողովի յուրաքանչյուր հերթական նիստի համար իր գործունեությունների մասին հաշվետվություն, որը պետք է ներկայացված լինի Համաձայնագրի քարտուղարությանը ոչ ուշ, քան Կողմերի համաժողովի նիստից հարյուր քսան օր առաջ, իսկ պատճենները Համաձայնագրի քարտուղարության կողմից պետք է անմիջապես տրամադրվեն կողմերին, և
- (դ) իրագործի կողմերի ժողովի կողմից իրեն ուղղված ցանկացած այլ առաջադրանք:

4. Երբ տեխնիկական հանձնաժողովի կարծիքով առաջացել է արտակարգ իրավիճակ, որը պահանջում է ընդունել անհապաղ միջոցներ մեկ կամ ավելի միզագազային թռչունների պահպանման կարգավիճակի վատթարացումից խուսափելու համար, տեխնիկական հանձնաժողովը կարող է Համաձայնագրի քարտուղարությանը ներկայացնել հայց՝ շահագրգռված Կողմերի ժողով անհապաղ իրավիճակի համար: Դրանից հետո այդ Կողմերը պարտավոր են հանդիպել որքան հնարավոր է շուտ, որպեսզի արագորեն ստեղծեն մեխանիզմ, որը պահպանություն կտա մասնակիորեն անբարենպաստ վիճակում ճանաչված տեսակին: Ուր այդպիսի ժողովի ժամանակ ընդունվել է հանձնարարական, Կողմերը պետք է իրազեկ պահեն միմիանց և Համաձայնագրի քարտուղարությանը դրա կիրառման համար ձեռնարկած միջոցառումների, կամ այն պատճառների վերաբերյալ, ինչի համար հանձնարարականը չի իրականացվել:

5. Տեխնիկական հանձնաժողովը կարող է հիմնել այնպիսի աշխատանքային խմբեր, որոնք կարող են անհիրաժեշտ լինել յուրահատուկ առաջադրանքների հետ առնչվելու համար:

Չորրորդ Կարգադրություն VIII. Համաձայնագրի քարտուղարություն

Համաձայնագրի քարտուղարության գործառույթներն են՝

- (ա) նախաձեռնել և սպասարկել Կողմերի ժողովի նիստերը, ինչպես նաև Տեխնիկական հանձնաժողովի ժողովները.
- (բ) իրականացնել Կողմերի ժողովի կողմից իրեն ուղղված որոշումները.
- (գ) նպաստել և համակարգել Համաձայնագրում ներառված գործունեությունները, ներառյալ գործողությունների ծրագիրը՝ համապատասխան Կողմերի ժողովի որոշումների.
- (դ) կապ պահպանել տարածման շրջանի ոչ կողմ պետությունների հետ և քաջալերել համակարգումը կողմերի և միջագազային ու ազգային այն կազմակերպությունների միջև, որոնց գործունեությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարևոր է ջրային թռչունների պահպանության համար, ներառյալ միզագազային պահպանումը և պաշտպանությունը.
- (ե) հավաքել և գնահատել տեղեկատվություն, որը կխթանի Համաձայնագրի նպատակներն ու իրականացումը և կազմակերպել այդ տեղեկատվության համապատասխան տարածումը.
- (զ) Կողմերի ժողովի ուշադրությունը հրավիրել սույն Համաձայնագրի նպատակների հետ կապված դրույթներին.
- (է) շրջանառության մեջ դնել սույն Համաձայնագրի V հոդվածի 1 կետի (ա) ենթակետով սահմանված Լիազորների և տեխնիկական հանձնաժողովի զեկույցների պատճենները, սույն հոդվածի (ը) ենթակետով սահմանված զեկույցների պատճենների հետ միասին, որը դա պետք է տրամադրի յուրաքանչյուր Կողմին առնվազն վաթսուներկու օր առաջ Կողմերի ժողովի յուրաքանչյուր հերթական նիստի սկզբից.

- (ը) պատրաստել ամենամյա և Կողմերի ժողովի յուրաքանչյուր հերթական նիստի համար Քարտուղարության աշխատանքների և Համաձայնագրի իրականացման մասին հաշվետվություններ.
- (թ) վարել Համաձայնագրի բյուջեն, իսկ պահպանման հիմնադրամի հիմնման դեպքում՝ նաև հիմնադրամը.
- (ժ) տրամադրել տեղեկատվություն Համաձայնագրի և դրա նպատակների մասին լայն հասարակությանը, և
- (ժա) կատարել այլ գործառույթներ, որոնք կարող են իրեն հանձնարարված լինել սույն Համաձայնագրով կամ Կողմերի համաժողովի կողմից:

Հոդված IX. Հարաբերությունները միջազգային ջրային թռչունների և դրանց բնակավայրերի հետ առնչություն ունեցող միջազգային մարմինների հետ

Համաձայնագրի քարտուղարությունը պետք է խորհրդակցի՝

- (ա) պարբերաբար Կոնվենցիայի քարտուղարության և, որտեղ անհրաժեշտ է, Կոնվենցիայի IV հաղվածի 3 և 4 բաժիններում սահմանված Համաձայնագրերի քարտուղարության գործառույթների համար պատասխանատու մարմինների, որոնք առնչություն ունեն միջազգային ջրային թռչունների հետ՝ Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրային թռչունների բնակավայր կոնվենցիայի (1971), Վտանգված տեսակների ֆաունայի և ֆլորայի միջազգային առևտրի մասին կոնվենցիայի (1973), Բնության և բնական պաշարների պահպանման մասին աֆրիկյան կոնվենցիայի (1968), Եվրոպական վայրի աշխարհի և բնական բնակավայրերի պահպանության մասին կոնվենցիայի (1979), Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի (1992), նպատակ ունենալով Կողմերի ժողովի և սույն Կոնվենցիաների Կողմերի հետ բոլոր ընդհանուր շահերի առումով համագործակցություն և, հատկապես, գործողությունների ծրագրի մշակման և իրականացման համար.
- (բ) ընդհանուր շահեր ունեցող այլ Կոնվենցիաների քարտուղարությունների և միջազգային գործիքների հետ, և
- (գ) այլ կազմակերպությունների իրավասու պահպանման ոլորտում, ինչպես նաև հետազոտության, կրթության և իրազեկման բարձրացման ոլորտներում, ներառյալ միջազգային ջրային թռչունների և դրանց բնակավայրերի պահպանության և կառավարման:

Հոդված X. Համաձայնագի լրացում

1. Սույն համաձայնագիրը կարող է լրացվել Կողմերի ժողովների ցանկացած հերթական և արտահերթ նիստերում:

2. Լրացման առաջարկ կարող է կատարվել ցանկացած Կողմի նախաձեռնությամբ:

3. Ցանկացած ուղղում կատարելու տեքստը և դրա դրդապատճառները պետք է հաղորդվեն Համաձայնագրի քարտուղարությանը նիստի բացման օրվանից առնվազն հարյուր հիսուն օր առաջ: Համաձայնագրի քարտուղարությունը անմիջապես դրանց պատճենները պետք է տրամադրի Կողմերին: Կողմերի կողմից տեքստի վերաբերյալ ցանկացած դիտողություն պետք է հաղորդվի Համաձայնագրի քարտուղարությանը նիստի բացման օրվանից առնվազն վաթսուներեք օր առաջ: Քարտուղարությունը պետք է դիտողությունների ներկայացման վերջին օրվանից հետո հնարավորին չափ շուտ մինչ այդ օրը ներկայացված բոլոր դիտողությունները հաղորդի Կողմերին:

4. Համաձայնագրի լրացում, այլը քան լրացում իր հավելվածներին, պետք է ընդունվի ներկա և քվեարկող Կողմերի մեծամասնության երկու երրորդով և պետք է ուժի մեջ մտնի այն Կողմերի համար, որոնք դա ընդունել են, երեսուներորդ օրը այն օրվանից, երբ Համաձայնագրի կողմերի երկու երրորդը լրացումի ընդունման օրը ներդրել են իրենց լրացումներ կատարելու ընդունման միջոցները Ավանդապահին: Ցանկացած կողմի համար, որը ներդնում է ընդունման միջոց Կողմերի երկու երրորդի ընդունման միջոցի ներդրումից հետո այդ լրացումը ուժի մեջ է մտնում երեսուներորդ օրը իր ընդունման միջոցի ներդրումից հետո:

5. Ցանկացած հավելյալ հավելվածներ և ցանկացած հավելվածի լրացում պետք է ընդունվի ներկա և քվարկող Կողմերի մեծամասնության երկու երրորդով և բոլոր կողմերի համար պետք է ուժի մեջ մտնի Կողմերի ժողովի կողմից դրա ընդունման իննսուներորդ օրը, բացառությամբ այն Կողմերի, որոնք սույն Հոդվածի 6 բաժնին համապատասխան ներկայացրել են վերապահում:

6. Սույն հոդվածի 5 բաժնում նշված իննսուներորդ ժամանակահատվածի ընթացքում, ցանկացած Կողմ կարող է Ավանդապահին գրավոր ծանուցմամբ ներկայացնել վերապահում կապված հավելյալ հավելվածի կամ հավելվածի լրացման հետ: Այսպիսի վերապահումը ցանկացած ժամանակ կարելի է ետ վերցնել Ավանդապահին գրավոր ծանուցմամբ, և դրանից հետո հավելյալ հավելվածը կամ լրացումը տվյալ Կողմի համար պետք է ուժի մեջ մտնի վերապահման ետ վերցնելու օրվանից երեսուներորդ օրը:

Հոդված XI. Սույն Համաձայնագրի ազդեցությունը միջազգային Կոնվենցիաների և օրենսդրության վրա

1. Սույն Համաձայնագրի դրույթները չեն ազդում գոյություն ունեցող միջազգային պայմանագրերից, կոնվենցիաներից կամ համաձայնագրերից բխող ցանկացած Կողմի իրավունքներին և պարտավորություններին:

2. Սույն Համաձայնագրի դրույթները ոչ մի կերպ չեն ազդում ցանկացած Կողմի իրավունքներին միգրացվող ջրային թռչունների և դրանց բնակավայրերի պահպանման ավելի խստապահանջ միջոցների ընդունումից:

Հոդված XII. Վեճերի լուծում

1. Ցանկացած վեճ, որը կարող է առաջանալ երկու կամ ավելի Կողմերի միջև սույն Համաձայնագրի դրույթների հետ կապված մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ, պետք է լինի վեճում ընդգրկված Կողմերի միջև բանակցությունների առարկա:

2. Եթե վեճը չի կարող լուծվի սույն հոդվածի 1 բաժնին համապատասխան, Կողմերը կարող են փոխադարձ համաձայնությամբ ներկայացնել վեճը արբիտրաժի, մասնավորապես Հաագայի արբիտրաժի մշտական դատարանին և վեճը ներկայացնող Կողմերը պետք է լինեն հարկադրված արբիտրաժային որոշմամբ:

Հոդված XIII. Ստորագրում, Վավերացում, Ընդունում, Հաստատում, Միացում

1. Սույն Համաձայնագիրը պետք է բաց լինի ստորագրման համար տարածման շրջանի ցանկացած պետության համար, անկախ նրանից, թե համընկնում է դրա տարածքը Համաձայնագրի տարածքի հետ, թե ոչ, կամ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպության հետ, որի առնվազն մեկ անդամ հանդիսանում է տարածքի պետություն, հետևյալ կերպ՝

- (ա) ստորագրում առանց վավերացման վերապահումի, ընդունում կամ հաստատում, կամ
- (բ) ստորագրում վավերացման վերապահումով, վավերացմամբ հաջորդվող ընդունում կամ հաստատում:

2. Սույն համաձայնագիրը մինչ ուժի մեջ մտնելը ստորագրման համար բաց կլինի Հաագայում:

3. Սույն Համաձայնագիրը կլինի բաց միացման համար տարածքի ցանկացած պետության, կամ վերը 1 բաժնում նշված տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպության համար սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրից և դրանից հետո:

4. Վավերացման, ընդունման կամ հաստատման կամ միացման միջոցները հանձնված կլինեն Ավանդապահին:

Հոդված XIV. Ուժի մեջ մտնելը

1. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի երրորդ անսվա առաջին օրը այն օրվանից, երբ տարածման շրջանի առնվազն տասներորդ պետություններ կամ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպություններ, դրանցից առնվազն յոթը Աֆրիկայի և յոթը Եվրասիայի, ստորագրել են առանց վավերացման վերապահման, ընդունման կամ հաստատման կամ, համապատասխան սույն Համաձայնագրի XIII Հոդվածի հանձնել են իրենց վավերացման, ընդունման, կամ հաստատման միջոցները:

2. Ցանկացած տարածքի պետության կամ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպության համար, որը՝

- (ա) ստորագրել է առանց վավերացման վերապահման, ընդունման կամ հաստատման.

(բ) վավերացրել, ընդունել կամ հաստատել է. կամ

(գ) միացել է սույն Համաձայնագրին այն օրվանից հետո, երբ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ քանակի տարածքի պետությունները կամ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպությունները ստորագրել են դա առանց վերապահման, կամ վավերացրել, ընդունել կամ հաստատել են, սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրումից, կամ այդ պետության կամ կազմակերպության վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման միջոցների հանձնումից հետո երրորդ անվառաջին օրը:

Յոթերորդ Կ. Վերապահումներ

Սույն Համաձայնագրի դրույթները չեն կարող լինել ընդհանուր վերապահման առարկա: Ինչևէ, ցանկացած պետություն կամ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպություն կարող է ընդունվել մասնավոր վերապահում առանց վերապահման վավերացման, ընդունման կամ հաստատման ստորագրման պահին կապված սույն Համաձայնագրում ընդգրկված ցանկացած տեսակի կամ Գործողությունների ծրագրի ցանկացած մասնակի դրույթի վերաբերյալ: Նման վերապահումը պետության կամ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպության կողմից ցանկացած ժամանակ կարող է ետ վերցվել Ավանդապահին գրավոր ծանուցման միջոցով. այդպիսի պետությունը կամ կազմակերպությունը պետք է չլինի վերապահման առարկա հանդիսացող դրույթներով հարկադրված մինչ վերապահման ետ վերցնելու օրվանից երեսուներորդ օրը:

Յոթերորդ Կ. Հրաժարում

Ցանկացած Կողմ ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել սույն համաձայնագրից՝ գրավոր ծանուցմամբ Ավանդապահին: Հրաժարումը ուժի մեջ է մտնում Ավանդապահի կողմից ծանուցման ստացման օրվանից տասներկու ամիս անց:

Յոթերորդ Կ. Ավանդապահ

1. Սույն Համաձայնագրի բնօրինակը արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով է, յուրաքանչյուր տարբերակ լինելով հավասարազոր վավեր, պետք է լինի ներդրված Նիդերլանդների միացյալ թագավորության կառավարությունում, որն էլ կլինի Ավանդապահը: Ավանդապահը պետք է փոխանցի սույն բնօրինակների հաստատված տարբերակները սույն Համաձայնագրի XVII հոդվածի 1 կետում նշված բոլոր պետություններին և տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպություններին և Համաձայնագրի քարտուղարությունը՝ դրա հիմնվելուց հետո:

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո հնարավորին չափ շուտ դրա հաստատված պատճեն պետք է Ավանդապահի կողմից տրամադրվի Միացյալ ազգերի կազմակերպության քարտուղարությանը տպագրման և գրանցման համար՝ համաձայն Միացյալ ազգերի կազմակերպության կանոնադրության 102 հոդվածի:

3. Ավանդապահը պետք է տեղեկացնի բոլոր երկրներին և տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպություններին, որոնք ստորագրել են կամ միացել են Համաձայնագրին, և Համաձայնագրի քարտուղարությանը՝

(ա) ցանկացած ստորագրության,

(բ) ցանկացած ստորագրման, վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման միջոցների ներկայացման,

(գ) սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը և ցանկացած հավելյալ հավելվածի, ինչպես նաև սույն Համաձայնագրում կամ դրա հավելվածներում ցանկացած լրացումների,

(դ) ցանկացած վերապահում հավելյալ հավելվածի կամ հավելվածի ուղղման նպատակի,

(ե) ցանկացած դուրս գալու վերապահման, և

(զ) սույն Համաձայնագրին ցանկացած մեղադրման ծանուցման մասին:

Ավանդապահը պետք է փոխանցի բոլոր պետություններին և տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպություններին, որոնք ստորագրել են կամ միացել են սույն Համաձայնագրին և Համաձայնագրի քարտուղարությանը, ցանկացած վերապահման տեքստ, ցանկացած հավելյալ հավելվածի կամ Համաձայնագրի կամ դրա հավելվածների ցանկացած ուղղում:

Ի հավատումն դրան, պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալները ստորագրել են սույն Համաձայնագիրը:

Աֆրիկյան Եվրոպական Արևմտասիական ջրային թռչունների Համաձայնագիր

ՀԱՎԵԼՎԱԾ I. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՏԱՐԱԾՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Սույն Համաձայնագրի տարածքի սահմանը սահմանված է հետևյալ կերպ՝ Հյուսիսային բևեռից 130°W երկայնքի գծով դեպի հարավ մինչև 75°N երկայնությունը. այնտեղից Վիսքոնսին Մեյսոն Սաունթ Նեղուցի, Փրինս Ռիջընթ խորշի, Բուֆիա ծովածոցի, Ֆոքս Լագունի, Ֆոքսի Նեղուցի և Հուդզոնի Նեղուցի միջով դեպի արևելք և հարավարևելք մինչև հյուսիսարևմտյան Ատլանտիկայի 60°N, 60°W կետը. այնտեղից հյուսիսարևմտյան Ատլանտիկայի միջով դեպի հարավարևելք մինչև 50°N, 30°W կետը. այնտեղից 30°W երկայնքի գծով դեպի հարավ մինչև 10°N երկայնությունը. այնտեղից դեպի հյուսիսարևելք մինչև Հասարակածի 20°W. այնտեղից 20°W երկայնքով դեպի հարավ մինչև 40°S. այնտեղից 40°S երկայնությունով դեպի արևելք մինչև 60°E. այնտեղից 60°E երկայնքի գծով դեպի հյուսիս մինչև 35°N երկայնությունը. այնտեղից մեծ շրջագիծով դեպի արևելք-հյուսիսարևելք մինչև արևմտյան Ալտայի 49°N, 87°27'E կետը. այնտեղից մեծ շրջագիծով դեպի հյուսիսարևելք մինչև Հյուսիսային օվկիանոսի ափի 130°E. այնտեղից 130°E երկայնքով դեպի հյուսիս մինչև Հյուսիսային բևեռ:

Աֆրիկյան Եվրոպական Արևմտասիական ջրային թռչունների Համաձայնագիր

ՀԱՎԵԼՎԱԾ II. ՏԵՍԱԿՆԵՐԸ

SPHENISCIDAE

Spheniscus demersus Աֆրիկական պինգվին

GAVIIDAE

Gavia adamsii Սպիտակակտուց սուզաբադ
Gavia arctica *Սևխածի սուզաբադ
Gavia immer Սովորական սուզաբադ
Gavia stellata *Կարմրախածի սուզաբադ

PODICIPEDIDAE

Podiceps auritus *Կարմրավիզ սուզակ
Podiceps cristatus *Մեծ սուզակ
Podiceps grisegena *Մոխրաայտ սուզակ
Podiceps nigricollis *Սևավիզ սուզակ
Tachybaptus ruficollis *Փոքր սուզակ

PELECANIDAE

Pelecanus crispus *Գանգրափետուր հավալուսն
Pelecanus onocrotalus *Վարդագույն հավալուսն
Pelecanus rufescens Վարդագույնամեջք հավալուսն

SULIDAE

Morus capensis Հարավաֆրիկյան գանեթ

PHALACROCORACIDAE

Phalacrocorax capensis Հարավաֆրիկյան ձկնկուլ
Phalacrocorax carbo *Մեծ ձկնկուլ
Phalacrocorax coronatus Պսակավոր ձկնկուլ
Phalacrocorax neglectus Գետափնյա ձկնկուլ
Phalacrocorax nigrogularis Սոկոտրյան ձկնկուլ
Phalacrocorax pygmeus *Փոքր ձկնկուլ

ARDEIDAE

Ardea cinerea *Մոխրագույն տառեղ
Ardea melanocephala Սևագլուխ տառեղ
Ardea purpurea *Շիկակարմիր տառեղ
Ardeola idae Մադագասկարյան տառեղ
Ardeola ralloides *Դեղին տառեղ

<i>Ardeola rufiventris</i>	Շիկակարմրափոր տառեղ
<i>Botaurus stellaris</i>	*Մեծ ջրցուլ
<i>Bubulcus ibis</i>	*Եգիպտական տառեղ
<i>Casmerodius albus</i>	*Սպիտակ մեծ տառեղ
<i>Egretta ardesiaca</i>	Սև տառեղ
<i>Egretta dimorpha</i>	Երկձև տառեղ
<i>Egretta garzetta</i>	*Սպիտակ փոքր տառեղ
<i>Egretta gularis</i>	Արևմտյան խութային տառեղ
<i>Egretta vinaceigula</i>	Շերթաքարագույն տառեղ
<i>Ixobrychus minutus</i>	*Փոքր ջրցուլ
<i>Ixobrychus sturmii</i>	Թզուկ ջրցուլ
<i>Mesophoyx intermedia</i>	Միջին տառեղ
<i>Nycticorax nycticorax</i>	*Կվակվա

BALAENICIPITIDAE

<i>Balaeniceps rex</i>	Կոշկակտուց արագիլ
------------------------	-------------------

CICONIIDAE

<i>Anastomus lamelligerus</i>	Աֆրիկյան բերանբաց արագիլ
<i>Ciconia abdimii</i>	Աբդիմի արագիլ
<i>Ciconia ciconia</i>	*Սպիտակ արագիլ
<i>Ciconia episcopus</i>	Բրդոտավիզ արագիլ
<i>Ciconia nigra</i>	*Սև արագիլ
<i>Leptoptilos crumeniferus</i>	Մարաբու
<i>Mycteria ibis</i>	Դեղնակտուց արագիլ

THRESKIORNITHIDAE

<i>Geronticus eremita</i>	Ճաղատ իբիս
<i>Platalea alba</i>	Աֆրիկյան տարգալակտուց
<i>Platalea leucorodia</i>	*Եվրոպական տարգալակտուց
<i>Plegadis falcinellus</i>	*Քաջահավ
<i>Threskiornis aethiopicus</i>	Սուրբ իբիս

PHOENICOPTERIDAE

<i>Phoenicopterus minor</i>	Փոքր ֆլամինգո
<i>Phoenicopterus ruber</i>	*Սովորական ֆլամինգո

ANATIDAE

<i>Alopochen aegyptiacus</i>	Եգիպտական սագ
<i>Anas acuta</i>	*Նետապոչ բադ
<i>Anas capensis</i>	Հարավաֆրիկյան մրտիմն
<i>Anas clypeata</i>	*Լայնակտուց բադ
<i>Anas crecca</i>	*Սուլող մրտիմն
<i>Anas erythrorhyncha</i>	Կարմրակտուց բադ
<i>Anas hottentota</i>	Հոտենտոտյան մրտիմն
<i>Anas penelope</i>	*Շչան բադ
<i>Anas platyrhynchos</i>	*Կոնչան բադ
<i>Anas querquedula</i>	*Ճքճքան մրտիմն
<i>Anas strepera</i>	*Մոխրագույն բադ
<i>Anas undulata</i>	Դեղնակտուց բադ
<i>Anser albifrons</i>	*Սպիտակաճակատ սագ
<i>Anser anser</i>	*Մոխրագույն սագ
<i>Anser brachyrhynchus</i>	Վարդագույնաոտք սագ
<i>Anser erythropus</i>	*Ծվվան սագ
<i>Anser fabalis</i>	Բակլասագ

<i>Aythya ferina</i>	*Կարմրագլուխ սուզաբադ
<i>Aythya fuligula</i>	*Փուփուլավոր սուզաբադ
<i>Aythya marila</i>	Մեծ սուզաբադ
<i>Aythya nyroca</i>	*Սպիտակաաչք սուզաբադ
<i>Branta bernicla</i>	Սև սագ
<i>Branta leucopsis</i>	Խպիտակաախտ սագ
<i>Branta ruficollis</i>	*Կարմրախածի սագ
<i>Bucephala clangula</i>	*Սոնաբադ
<i>Clangula hyemalis</i>	Ծովաբադ
<i>Cygnus columbianus</i>	*Փոքր կարապ
<i>Cygnus cygnus</i>	*Ճչան կարապ
<i>Cygnus olor</i>	*Թշշան կարապ
<i>Dendrocygna bicolor</i>	Գորշ ծառի բադ
<i>Dendrocygna viduata</i>	Սպիտակերես ծառի բադ
<i>Marmaronetta angustirostris</i>	*Մարմարյա մրտինն
<i>Melanitta fusca</i>	*Տուրպան
<i>Melanitta nigra</i>	*Սև տուրպան
<i>Mergellus albellus</i>	*Լուտոկ
<i>Mergus merganser</i>	*Մեծ սղոցակտուց բադ
<i>Mergus serrator</i>	*Սղոցակտուց բադ
<i>Netta erythrophthalma</i>	Հարավային սուզաբադ
<i>Netta rufina</i>	*Կարմրակտուց սուզաբադ
<i>Nettapus auritus</i>	Աֆրիկյան թզուկ սագ
<i>Oxyura leucocephala</i>	*Սպիտակագլուխ բադ
<i>Oxyura maccoa</i>	Մակկո բադ
<i>Plectropterus gambensis</i>	Խթանաթև սագ
<i>Polysticta stelleri</i>	Ստելլերի այդերուկ
<i>Sarkidiornis melanotos</i>	Պալարակտուց այդերուկ
<i>Somateria mollissima</i>	Այդերուկ
<i>Somateria spectabilis</i>	Ակնոցավոր այդերուկ
<i>Tadorna cana</i>	Հարավաֆրիկյան խայտաբադ
<i>Tadorna ferruginea</i>	*Կարմիր բադ
<i>Tadorna tadorna</i>	*Խայտաբադ
<i>Thalassornis leucanotus</i>	Սպիտակամեջք բադ

GRUIDAE

<i>Balearica pavonina</i>	Սև պսակավոր կռունկ
<i>Balearica regulorum</i>	Մոխրագույն պսակավոր կռունկ
<i>Grus carunculatus</i>	Հյուսկեն կռունկ
<i>Grus grus</i>	*Մոխրագույն կռունկ
<i>Grus leucogeranus</i>	Սիբիրյան կռունկ
<i>Grus paradisea</i>	Կապույտ կռունկ
<i>Grus virgo</i>	*Գեղանի կռունկ

RALLIDAE

<i>Aenigmatolimnas marginalis</i>	Ձուլավոր ճահճահովվիկ
<i>Amaurornis flavirostra</i>	Սև ճահճահովվիկ
<i>Crecopsis egregia</i>	Աֆրիկյան ճահճահովվիկ
<i>Crex crex</i>	*Մարգահավ
<i>Fulica atra</i>	*Սև փարփար
<i>Fulica cristata</i>	Փուփուլավոր փարփար
<i>Gallinula angulata</i>	Փոքր եղեգնահավ
<i>Gallinula chloropus</i>	*Եղեգնահավ
<i>Porphyrio alleni</i>	Ալլենի սուլթանական հավ
<i>Porzana parva</i>	*Ճահճահովվիկ
<i>Porzana porzana</i>	*Մեծ ճահճահովվիկ
<i>Porzana pusilla</i>	*Գաճաճ ճահճահովվիկ
<i>Rallus aquaticus</i>	*Ջրահովվիկ

<i>Rallus caerulescens</i>	Կաֆրական ջրահովվիկ
<i>Sarothrura ayresi</i>	Սպիտակաթև բմբուլապոչ
<i>Sarothrura boehmi</i>	Չոլադոչ բմբուլապոչ
<i>Sarothrura elegans</i>	Դեղնաբիծ բմբուլապոչ

DROMADIDAE

<i>Dromas ardeola</i>	Խեցգետնակեր պինդիրա
-----------------------	---------------------

HAEMATOPODIDAE

<i>Haematopus moquini</i>	Սև կտցար կաչաղակ
<i>Haematopus ostralegus</i>	*Կտցար կաչաղակ

RECURVIROSTRIDAE

<i>Himantopus himantopus</i>	*Ոտնացուպիկ
<i>Recurvirostra avosetta</i>	*Բզակտուց

BURHINIDAE

<i>Burhinus senegalensis</i>	Սենեգալյան հաստածունկ
------------------------------	-----------------------

GLAREOLIDAE

<i>Glareola cinerea</i>	Մոխրագույն ծիխառակտցար
<i>Glareola nordmanni</i>	*Տափաստանային ծիխառակտցար
<i>Glareola nuchalis</i>	Ժայռային ծիխառակտցար
<i>Glareola ocularis</i>	Մաղազասկարյան ծիխառակտցար
<i>Glareola pratincola</i>	*Մարգագետնային ծիխառակտցար
<i>Pluvianus aegyptius</i>	Եգիպտական քարադր

CHARADRIIDAE

<i>Charadrius alexandrinus</i>	*Ծովային քարադր
<i>Charadrius asiaticus</i>	*Կասպիական քարադր
<i>Charadrius dubius</i>	*Փոքր քարադր
<i>Charadrius forbesi</i>	Ֆորբեսի քարադր
<i>Charadrius hiaticula</i>	*Փողկապավոր քարադր
<i>Charadrius leschenaultii</i>	*Ջաստակտուց քարադր
<i>Charadrius marginatus</i>	Սպիտակաճակատ քարադր
<i>Charadrius mongolus</i>	Մոնղոլական քարադր
<i>Charadrius pallidus</i>	Շականակաօղ քարադր
<i>Charadrius pecuarius</i>	Կիտլիցի քարադր
<i>Charadrius tricollaris</i>	Եռօղանի քարադր
<i>Eudromias morinellus</i>	*Շվրասիական պինդիրա
<i>Pluvialis apricaria</i>	*Ոսկեփայլ քարադր
<i>Pluvialis fulva</i>	Խաղաղօվկիանոսյան ոսկեփայլ քարադր
<i>Pluvialis squatarola</i>	*Մոխրագույն քարադր
<i>Vanellus albiceps</i>	Սպիտակագլուխ կիվիվ
<i>Vanellus coronatus</i>	Փուփուլավոր կիվիվ
<i>Vanellus gregarius</i>	*Ճախրուկ
<i>Vanellus leucurus</i>	*Սպիտակապոչ եղտյուրիկ
<i>Vanellus lugubris</i>	Սենեգալյան կիվիվ
<i>Vanellus melanopterus</i>	Սևաթև կիվիվ
<i>Vanellus senegallus</i>	Սենեգալյան կիվիվ
<i>Vanellus spinosus</i>	*Թևաբոխ կիվիվ
<i>Vanellus superciliosus</i>	Շականակակուրծք կիվիվ
<i>Vanellus vanellus</i>	*Ջյուսիսային իվիվ

SCOLOPACIDAE

<i>Arenaria interpres</i>	*Քարաքուջուջ
<i>Calidris alba</i>	*Գերմակ ավազակտցար
<i>Calidris alpina</i>	*Սևախածի ավազակտցար
<i>Calidris canutus</i>	Կարմիր ավազակտցար
<i>Calidris ferruginea</i>	*Կարմրախածի ավազակտցար
<i>Calidris maritima</i>	Ծիրանագույն ավազակտցար
<i>Calidris minuta</i>	*Ճնճղուկ ավազակտցար
<i>Calidris temminckii</i>	*Սպիտկապոչ ավազակտցար
<i>Calidris tenuirostris</i>	Մեծ ավազակտցար
<i>Gallinago gallinago</i>	*Մորակտցար
<i>Gallinago media</i>	*Կրկնակտցար
<i>Gallinago stenura</i>	Նետապոչ նորակտցար
<i>Limicola falcinellus</i>	*Տիղմակտցար
<i>Limosa lapponica</i>	*Փոքր իլիկակտցար
<i>Limosa limosa</i>	*Մեծ իլիկակտցար
<i>Lymnocyptes minimus</i>	*Վարսակտցար
<i>Numenius arquata</i>	*Մեծ արորիկ
<i>Numenius phaeopus</i>	*Միջին արորիկ
<i>Numenius tenuirostris</i>	Նրբակտուց արորիկ
<i>Phalaropus fulicaria</i>	Մոխրագույն լողակտցար
<i>Phalaropus lobatus</i>	Կլորաքիթ լողակտցար
<i>Philomachus pugnax</i>	*Կռվակտցար
<i>Scolopax rusticola</i>	*Սնտռակտցար
<i>Tringa cinerea</i>	*Թերեքի կտցար
<i>Tringa erythropus</i>	*Պտավոր կտցար
<i>Tringa glareola</i>	*Ֆիֆի
<i>Tringa hypoleucos</i>	*Սպիտակավիզ կտցար
<i>Tringa nebularia</i>	*Ծխագույն կտցար
<i>Tringa ochropus</i>	*Սևուկ կտցար
<i>Tringa stagnatilis</i>	*Առածնյա կտցար
<i>Tringa totanus</i>	*Կարմրատ կտցար

LARIDAE

<i>Chlidonias hybridus</i>	*Սպիտակաայտ ջրածիծառ
<i>Chlidonias leucopterus</i>	*Սպիտակաթև ջրածիծառ
<i>Chlidonias niger</i>	*Սև ջրածիծառ
<i>Larus argentatus</i>	Արծաթափայլ որոր
<i>Larus armenicus</i>	*Հայկական որոր
<i>Larus audouinii</i>	Օդյուբոնի որոր
<i>Larus cachinnans</i>	*Քրքջան որոր
<i>Larus canus</i>	*Թխակապույտ որոր
<i>Larus cirrocephalus</i>	Ծխագլուխ որոր
<i>Larus dominicanus</i>	Դոմինիկյան որոր
<i>Larus fuscus</i>	*Փոքր ծովաորոր
<i>Larus genei</i>	*Ծովային աղավնաորոր
<i>Larus glaucooides</i>	Փոքր բևեռային որոր
<i>Larus hartlaubii</i>	Թագավորական որոր
<i>Larus hemprichii</i>	Մոխրոտ որոր
<i>Larus heuglini</i>	Հոգլինի որոր
<i>Larus hyperboreus</i>	Մեծ բևեռային որոր
<i>Larus ichthyaetus</i>	*Սևագլուխ քրքջան
<i>Larus leucophthalmus</i>	Սպիտակաաչք որոր
<i>Larus marinus</i>	Մեծ սևանեջք որոր
<i>Larus melanocephalus</i>	*Սևագլուխ որոր
<i>Larus minutus</i>	*Փոքր որոր
<i>Larus ridibundus</i>	*Սովորական որոր
<i>Sterna albifrons</i>	*Փոքր ջրածիծառ

<i>Sterna balaenarum</i>	Դամարայի ջրածիծառ
<i>Sterna bengalensis</i>	Փոքր փուփուլավոր ջրածիծառ
<i>Sterna bergii</i>	Փոքր փուփուլավոր ջրածիծառ
<i>Sterna caspia</i>	*Կասպիական ծովածիծառ
<i>Sterna dougallii</i>	Վարդագույն ջրածիծառ
<i>Sterna hirundo</i>	*Գետային ջրածիծառ
<i>Sterna maxima</i>	Արքայական ծովածիծառ
<i>Sterna nilotica</i>	*Որորակտուց ջրածիծառ
<i>Sterna paradisaea</i>	Արկտիկական ջրածիծառ
<i>Sterna repressa</i>	Սպիտակաայտ ջրածիծառ
<i>Sterna sandvicensis</i>	Սենդվիչյան ջրածիծառ
<i>Sterna saundersi</i>	Սոնդերսի ջրածիծառ
<i>Sterna vittata</i>	Անտարկտիկական ջրածիծառ
<i>Xema sabini</i>	Մտրակապոչ որոր

RYNCHOPIDAE

<i>Rynchops flavirostris</i>	Աֆրիկյան դանակակտուց
------------------------------	----------------------

*Հայաստանում հանդիպող տեսակները

Աֆրիկյան եվրոպական արևմտասիական ջրային թռչունների համաձայնագիր

Չավելված III. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Կիրառման դաշտը

1.1. Գործողության ծրագիրը կիրառելի է սույն Չավելվածի 1 Աղյուսակում (այսուհետև՝ «Աղյուսակ 1») թվարկված միգրացվող ջրային թռչունների պոպուլյացիաների համար:

1.2. Աղյուսակ 1-ը կազմում է սույն Չավելվածի ամբողջական մասը: Ցանկացած հղում սույն Գործողության ծրագրին նեռարում է հղում Աղյուսակ 1-ին:

2. Տեսակների պահպանություն

2.1. Օրենսդրական միջոցներ

2.1.1. Աղյուսակ 1-ի Ա սյունակում թվարկված պոպուլյացիաներ ունեցող Կողմերը պետք է ապահովեն այդ պոպուլյացիաների պահպանությունը համաձայն սույն Չամաձայնագրի III Հոդվածի 2(ա) ենթաբաժնի: Այդպիսի Կողմերը, մասնավորապես և համապատասխան ներքո 2.1.3. ենթաբաժնի դրույթներին, պետք է՝

(ա) արգելեն իրենց տարածքներում հանդիպող այդ պոպուլյացիաների թռչունների որսը և ձվերի հավաքը.

(բ) արգելեն միտումնավոր անհանգստացումը այնքանով, որքանով անհանգստացումը նշանակալից կլինի տվյալ պոպուլյացիայի պահպանության համար. և

(գ) արգելեն այդ պոպուլյացիաների ի խախտումն (ա) ենթաբաժնում նշված արգելքների որսված թռչունների և ձվերի, ինչպես նաև այդ թռչունների և ձվերի ճանաչելի մասերի կամ արգասիքների տիրակալումը կամ յուրացումը և առևտուրը:

Ա սյունակի 2 և 3 կարգերում թվարկված և աստղանիշով նշված պոպուլյացիաների որսը բացառության կարգով կարող է շարունակվել կայուն օգտագործման հիմքերի վրա այնտեղ, որտեղ այդ պոպուլյացիաների որսը հանդիսանում է բազմամյա արմատավորված մշակութային գործունեություն: Այսպիսի կայուն օգտագործումը պետք է իրականացվի՝ հիմք ընդունելով համապատասխան միջազգային մակարդակի տեսակի գործողության ծրագրի ներքո մշակված հատուկ նախատեսումները:

2.1.2. Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաներ ունեցող Կողմերը պետք է կանոնակարգեն Բ սյունակում թվարկված թռչունների որսը և ձվերի հավաքը: Այս իրավական միջոցառումների նպատակներն են պահպանել կամ նպաստել այդ պոպուլյացիաների բարենպաստ պաշտպանական կարգավիճակի վերականգնմանը և պոպուլյացիայի դինամիկայի վերաբերյալ առկա լավագույն գիտելիքների հիման վրա երաշխավորել որսի կամ այլ օգտագործման կայունությունը: Այսպիսի միջոցառումները, համապատասխան ներքո 2.1.3. ենթաբաժնի դրույթներին, պետք է՝

(ա) արգելեն տվյալ պոպուլյացիաների թռչունների որսը բազմացման և թևի բարձրանալու տարբեր փուլերում և բազմացման տարածքներ վերադառնալու շրջանում, եթե որսը ունի անբարենպաստ ազդեցություն տվյալ պոպուլյացիայի պահպանական կարգավիճակի վրա.

(բ) կարգավորեն որսի ձևերը.

(գ) սահմանափակեն, որտեղ նպատակահարմար է, որսի չափաքանակները և ապահովեն համապատասխան հսկողություն, որպեսզի երաշխավորեն, որ այս սահմանափակումները պահպանվում են.

(դ) արգելեն այն պոպուլյացիաների թռչունների և ձվերի տիրակալումը կամ յուրացումը և առևտուրը, որոնք որսվում են ի խախտումն տվյալ ենթաբաժնում նշված արգելքների, ինչպես

նաև այդ թռչունների և ձվերի ճանաչելի մասերի կամ արգասիքների տիրակալունը կամ յուրացունը և առևտուրը:

2.1.3. Կողմերին կարող են շնորհվել բացառություններ 2.1.1. և 2.1.2. ենթաբաժիններում նշված արգելքներից, անկախ Կոնվենցիայի III Զոդվածի 5 ենթակետից, եթե չկա որևէ այլ բավարար լուծում, հետևյալ նպատակների համար՝

- (ա) ցանքերին, ջրերին կամ ձկնորսությանը լուրջ վնասը կանխարգելելու համար.
- (բ) ելնելով օդային անվտանգության և այլ առաջնահերթ պետական խնդիրներից.
- (գ) գիտական և ուսումնական նպատակների, կամ այս նպատակների համար վերականգնման կամ բուժման.
- (դ) խիստ վերահսկողության ներքո, սելեկտիվ հիմունքների վրա, որոշ թռչունների փոքրաքանակ և սահմանափակ որսը, տիրակալունը կամ այլ օգտագործունը թույլատրելու. և
- (ե) համապատասխան պոպուլյացիաների բազմացումը և գոյատևումը խթանելու համար: Այդպիսի բացառությունները պետք է լինեն ստույգ իրենց էությանը և սահմանափակ տարածքով և ժամանակով և չպետք է գործեն ի վնաս Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաներին:

2.2. Առանձին տեսակների գործողության ծրագրեր

2.2.1. Կողմերը պետք է համագործակցեն առանձին տեսակների գործողության ծրագրերի մշակման և իրականացման նպատակով՝ նախապատվություն տալով Աղյուսակ 1-ի Ա սյունակի 1 կարգում թվարկված պոպուլյացիաներին, ինչպես նաև Աղյուսակ 1-ի Ա սյունակում աստղանիշի տակ նշված պոպուլյացիաներին: Համաձայնագրի քարտուղարությունը պետք է համակարգի այդպիսի պլանների զարգացումը, ներդաշնակացումը և իրականացումը:

2.2.2. Կողմերը պետք է պատրաստեն և իրականացնեն Աղյուսակ 1-ի Ա սյունակի 1 կարգում թվարկված պոպուլյացիաների առանձին տեսակների գործողության ծրագրեր՝ նպատակ ունենալով շիտակել նրանց ընդհանուր պահպանական կարգավիճակը: Այս գործողության ծրագիրը պետք է նեռարի հատուկ նախապայմաններ աստղիկով նշված պոպուլյացիաների համար: Երբ անհրաժեշտ է, պետք է հաշվի առնվի որսորդների կողմից տեսակի պատկանելիության անճիշտ որոշման պատճառով թռչունների պատահական սպանության պրոբլեմը:

2.3. Արտակարգ միջոցառումներ

Կողմերը պետք է հնարավորության և նպատակահարմարության դեպքերում միմիանց հետ համագործակցելով մշակեն և իրականացնեն արտակարգ միջոցառումներ Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար, երբ Համաձայնագրի տարածքի ցանկացած մասում առանձնահատուկ անբարենպաստ կամ վտանգոլ պայմաններ են դիտարկվում:

2.4. Վերականգնումներ

Կողմերը պետք է մեծագույն զգոնություն ցուցաբերեն Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաները իրենց պատմական տարածքներում, ուր դրանք արդեն չեն հանդիպում, վերականգնման ժամանակ: Նրանք պետք է ձգտեն մշակել և հետևել համապատասխան գիտական ուսումնասիրությունների վրա հիմնավորված վերականգնման համառոտ ծրագրերին: Վերականգնման ծրագրերը պետք է կազմեն առանձին տեսակների գործողությունների ազգային և, ուր նպատակահարմար է, միջազգային ծրագրերի ամբողջական մասը: Վերականգնման ծրագիրը պետք է ներառի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և պետք է մատչելի լինի: Կողմերը պետք է նախապես տեղեկացնեն Համաձայնագրի քարտուղարությանը Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների վերականգնման բոլոր ծրագրերի մասին:

2.5. Ներմուծումներ

2.5.1. Կողմերը, եթե դա անհրաժեշտ են համարում, պետք է արգելեն ոչ բնորոշ բույսերի և կենդանիների այն տեսակների ներմուծումները, որոնք կարող են վնասակար լինել Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար:

2.5.2. Կողմերը, եթե դա անհրաժեշտ են համարում, պետք է պահանջեն համապատասխան նախազգուշական միջոցների կիրառում, որպեսզի խուսափեն ոչ բնորոշ տեսակներին պատկանող թռչունների պատահական ազատ արձակումից:

2.5.3. Կողմերը պետք է, իրագործելիության և նպատակահարմարության սահմաններում, ձեռնարկեն միջոցներ, ներառյալ որսը, որպեսզի ապահովեն, որ նրանց տարածքներ արդեն իսկ ներմուծված ոչ բնորոշ տեսակները կամ նրանց խառնածինները չհանդիսանան հավանական վնասի աղբյուր Ադյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար:

3. Բնակավայրի պահպանություն

3.1. Բնակավայրի գույքագրումներ

3.1.1. Նպատակահարմարության դեպքում Կողմերը միջազգային կազմակերպությունների հետ համատեղ պետք է ձեռնարկեն և հրապարակեն իրենց տարածքներում գտնվող Ադյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար կարևոր բնակավայրերի ազգային գույքագրումներ:

3.1.2. Որպես առաջնահերթ խնդիր Կողմերը պետք է ձգտեն, որոշել Ադյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար միջազգային և ազգային կարևորություն ունեցող բոլոր բնակավայրերը:

3.2. Տարածքների պահպանություն

3.2.1. Կողմերը պետք է ձգտեն շարունակել հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը Ադյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների կարևոր բնակավայրերի պահպանության համար և մշակեն ու իրականացնեն այդ տարածքների կառավարման պլանները:

3.2.2. Կողմերը պետք է ձգտեն տալ հատուկ պահպանության կարգավիճակ այն խոնավ տարածքներին, որոնք համապատասխանում են միջազգայնորեն ընդունված միջազգային կարևորության չափանիշներին:

3.2.3. Կողմերը պետք է ձգտեն իրականացնել իրենց երկրի բոլոր խոնավ տարածքների խոհեմ և կայուն օգտագործումը: Մասնավորապես, նրանք պետք է ձգտեն խուսափել Ադյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաներին աջակցող բնակավայրերի վատթարացումը և կորուստը՝ համապատասխան կանոնների կամ ստանդարտների կիրառման և հսկողության միջոցով: Մասնավորապես, նրանք պետք է ձգտեն.

- (ա) երաշխավորել, ուր իրականացնելի է, որ գյուղատնտեսական քիմիկատների, թունաքիմիկատների օգտագործման և աղտոտված ջրերի նետումների վերաբերյալ կիրառվում են օրենքով սահմանված անհրաժեշտ հսկողությունների լծակներ, որոնք համապատասխանում են միջազգային չափանիշներին և նպատակ ունեն նվազեցնել նրանց անբարենպաստ ազդեցությունը Ադյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների վրա. և
- (բ) պատրաստել և տարածել իրականացվող կանոնները կամ ստանդարտները և հսկողության միջոցառումները և այդ միջոցառումներից բխող մարդկանց ու բնության շահերը նկարագրող համապատասխան լեզուներով տեղեկատվական նյութեր:

3.2.4. Հիմնվելով էկոհամակարգային մոտեցման վրա՝ Կողմերը պետք է ձգտեն մշակել ռազմավարություններ Ադյուսակ 1-ում թվարկված բոլոր պոպուլյացիաների բնակավայրերի պահպանության համար, ներառյալ տարակենտրոնացված պոպուլյացիաների բնակավայրերը:

3.3. Վերահաստատում և վերականգնում

Կողմերը պետք է ձգտեն վերահաստատել և վերականգնել, որտեղ իրականացնելի է և նպատակահարմար, այն տարածքները, որոնք նախկինում կարևոր էին Ադյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների համար:

4. Մարդու գործունեության կառավարում

4.1. Որսորդություն

4.1.1. Կողմերը պետք է համագործակցեն, որպեսզի երաշխավորեն, որ նրանց որսորդական օրենսդրությունը ապահովում է կայուն օգտագործման սկզբունքը, ինչպես դա նախատեսվում է այս գոծողության ծրագրով՝ հաշվի առնելով համապատասխան ջրային թռչունների պոպուլյացիաների աշխարհագրական տարածվածությունը և նրանց կյանքի ցիկլի հատկությունները:

4.1.2. Կողմերը պետք է տեղեկացված պահեն Պայմանագրի քարտուղարությանը Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների որսին վերաբերվող օրենսդրության մասին

4.1.3. Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների տարեկան որսը գնահատելու համար Կողմերը պետք է համագործակցեն՝ նպատակ ունենալով զարգացնել որսի տվյալների հավաքման համար ապահով և միասնական համակարգ: Երբ հնարավոր է, նրանք պետք է տրամադրեն Համաձայնագրի քարտուղարությանը յուրաքանչյուր պոպուլյացիայի ընդհանուր տարեկան որսաչափի տվյալները:

4.1.4. Կողմերը պետք է ձգտեն կրճատել և մինչև 2000 թվականը վերացնել կապարի կոտորակի օգտագործումը խոնավ տարածքներում:

4.1.5. Կողմերը պետք է մշակեն և իրականացնեն միջոցառումներ, որպեսզի նվազեցնեն և հնարավորինս վերացնեն թունավորված խայծերի օգտագործումը:

4.1.6. Կողմերը պետք է մշակեն և իրականացնեն միջոցառումներ որսագողությունը հնարավորինս նվազեցնելու և վերացնելու համար:

4.1.7. Որտեղ հնարավոր է, Կողմերը պետք է խրախուսեն որսորդներին ստեղծել ակունքներ կամ կազմակերպություններ տեղական, ազգային և միջազգային մակարդակով իրենց գործողությունները համակարգելու և կայունության ապահովումը օժանդակելու նպատակով:

4.1.8. Կողմերը պետք է, որտեղ հնարավոր է, իրականացնեն որսորդների պատրաստականության ստուգումներ՝ այլ առարկաների թվում ներառելով նաև թռչունների որոշում:

4.2. Էկոտուրիզմ

4.2.1. Կողմերը, ուր նպատակահարմար է, պետք է խրախուսեն, սակայն ոչ պահպանվող տարածքների հիմնական գոտում, բոլոր շահագրգռված կողմերի համատեղ ծրագրեր, որպեսզի համապատասխան մեղմ և յուրահատուկ էկոտուրիզմ զարգացնեն Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների կուտակման խոնավ տարածքներում:

4.2.2. Կողմերը, համագործակցելով իրազեկ միջազգային կազմակերպությունների հետ, պետք է ձգտեն գնահատել Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների կուտակման ընտրյալ խոնավ տարածքների արժեքները, շահերը և էկոտուրիզմի պատճառով առաջացած հետևանքները, : Նրանք պետք է տեղեկացնեն Համաձայնագրի քարտուղարությունը նման գնահատումների արդյունքների մասին:

4.3. Մարդու այլ գործունեություն

4.3.1. Կողմերը պետք է գնահատեն այն նախատեսվող ծրագրերը, որոնք կարող են բերել բախմանը 3.2. ենթակետում նշված տարածքներում գտնվող Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների և մարդկային շահերի միջև և այդ գնահատման արդյունքները պետք է հրապարակայնորեն մատչելի դարձնեն:

4.3.2. Կողմերը պետք է ձգտեն հավաքել տեղեկատվություն Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների կողմից հասցված վնասի, մասնավորապես ցանքերին, և արդյունքների մասին զեկուցեն Համաձայնագրի քարտուղարությանը:

4.3.3. Կողմերը պետք է համագործակցեն, օգտագործելով աշխարհում որևէ այլ տեղ ձեռք բերված փորձը, Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների կողմից հասցված վնասը, մասնավորապես ցանքերին, նվազեցնելու համար համապատասխան միջոցներ կիրառելու նպատակով:

4.3.4. Կողմերը պետք է համագործակցեն գործողության ծրագրեր մշակելու նպատակով այն առանձին տեսակների համար, որոնց պոպուլյացիաները հասցնում են նշանակալի վնաս, մասնավորապես ցանքերին: Պայմանագրի քարտուղարությունը պետք է համակարգի այդպիսի ծրագրերի մշակումը և ներդաշնակումը:

4.3.5. Կողմերը պետք է հնարավորինս աջակցեն կառույցների նախագծման և շինարարության բարձր բնապահպանական ստանդարտներին՝ նվազագույնին հասցնելով Աղյուսակ 1-ում

թվարկված պոպուլյացիաներին հասնվելիք վնասը: Նրանք պետք է մշակեն քայլեր նվազագույն վնաս հասցնելու արդեն իսկ գոյություն ունեցող կառույցներից, երբ ակնհայտ է դառնում, որ դրանք բացասական ազդեցություն ունեն համապատասխան պոպուլյացիաների վրա:

4.3.6. Այն դեպքերում, երբ մարդկային անհանգստությունը վտանգում է Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների պահպանման կարգավիճակին, Կողմերը պետք է ձգտեն միջոցներ ձեռնարկել վտանգի աստիճանը սահմանափակելու համար: Համապատասխան միջոցները կարող են ներառել բնության հատուկ պահպանվող տարածքներում այնպիսի անհանգստությունից ազատ տարածքների ստեղծում, ուր հասարակության մուտքը չի թույլատրվում:

5. Հետազոտություն և դիտանց

5.1. Կողմերը պետք է ձգտեն իրականացնել գույքագրման աշխատանքներ այնպիսի ոչ բավականաչափ ճանաչված տարածքներում, որտեղ կարող են առաջանալ Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների կարևոր կուտակումներ: Նման գույքագրումների արդյունքները պետք է լայնորեն տարածվեն:

5.2. Կողմերը պետք է ձգտեն դիտանցեն Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաները: Նման դիտանցի արդյունքները պետք է տպագրվեն կամ ուղարկվեն համապատասխան միջազգային կազմակերպություններին՝ պոպուլյացիաների կարգավիճակը և դրա միտումները ամփոփելու համար:

5.3. Կողմերը պետք է համագործակցեն թռչունների պոպուլյացիաների միտումները գնահատելու նպատակով որպես չափանիշ այդպիսի պոպուլյացիաների կարգավիճակի նկարագրման համար:

5.4. Կողմերը պետք է համագործակցեն, որպեսզի որոշեն Աղյուսակ 1-ում թվարկված բոլոր պոպուլյացիաների միգրացիոն ուղիները՝ օգտագործելով բազմացման և ոչ բազմացման սեզոնների բաշխվածության և հաշվարման արդյունքների վերաբերյալ առկա գիտելիքները և մասնակցելով միասնական օղակավորման ծրագրերում:

5.5. Կողմերը պետք է ձգտեն նախաձեռնել և օժանդակել Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների էկոլոգիայի և պոպուլյացիաների դինամիկայի հետազոտական համատեղ ծրագրեր՝ նպատակ ունենալով որոշելու նրանց առանձնահատուկ կարիքները, ինչպես նաև նրանց պահպանության և կառավարման առավել նպատակահարմար մեթոդները:

5.6. Կողմերը պետք է ձգտեն ձեռնարկել Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների կողմից օգտագործվող խոնավ տարածքների կարողական տարողականության, ինչպես նաև այդ պոպուլյացիաների միգրացիայի բնույթի վրա խոնավ տարածքների կորուստի և վատթարացման ու անհանգստության ազդեցության հետազոտություններ:

5.7. Կողմերը պետք է ձգտեն ձեռնարկել Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների վրա որսի և առևտրի ազդեցության հետազոտություններ, ինչպես նաև այդ օգտագործման ձևերի անհրաժեշտության տեղական և ազգային տնտեսության համար:

5.8. Կողմերը պետք է ձգտեն համագործակցել համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ և օժանդակել հետազոտության և դիտանցի ծրագրեր:

6. ՈՒՏՈՒՆՈՒՄ և տեղեկատվություն

6.1. Կողմերը պետք է, որտեղ անհրաժեշտ է, ուսուցողական ծրագրեր կազմակերպեն, որպեսզի հանդավեն, որ տվյալ Գոծողությունների ծրագիրը իրականացնող անձնակազմը համապատասխան գիտելիքներ ունի այն արդյունավետ իրականացնելու համար:

6.2. Կողմերը պետք է համագործակցեն միմյանց և Համաձայնագրի քարտուղարության հետ՝ նպատակ ունենալով մշակել ուսուցողական ծրագրեր և փոխանակել ուսուցողական նյութեր:

6.3. Կողմերը պետք է ձգտեն հասարակության իրազեկության մակարդակը բարձրացնելու համար մշակել Գոծողության ծրագրի նպատակները, դրույթները և բովանդակությունը պարզաբանող ծրագրեր, տեղեկատվական նյութեր և մեխանիզմներ: Այդ իմաստով հատուկ ուշադրություն պետք է դարձվի կարևոր խոնավ տարածքներում և դրանց շուրջը բնակվող մարդկանց, այդ խոնավ

տարածքների օգտագործողներին (որսորդներ, ձկնորսներ, տուրիստներ, և այլն), ինչպես նաև տեղական կառավարման մարմիններին և այլ որոշում կայացնողներին:

6.4. Կողմերը պետք է ձգտեն իրականացնել հասարակության իրազեկության բարձրացման հատուկ միջոցառումներ Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաների պահպանության համար:

7. Իրականացում

7.1. Այս Գործողության ծրագրի իրականացման ժամանակ Կողմերը, երբ անհրաժեշտ է, պետք է առաջնահերթություն տան այն պոպուլյացիաներին, որոնք թվարկված են Աղյուսակ 1-ի Ա սյունակում:

7.2. Այն դեպքերում, երբ Աղյուսակ 1-ում թվարկված պոպուլյացիաներից Կողմի տարածքում նույն տեսակի երկուսից ավելի պոպուլյացիաներ են հանդիպում, այդ Կողմը պետք է ձեռնարկի այնպիսի պահպանական միջոցներ, որոնք համապատասխանում են առավել թույլ պահպանական կարգավիճակ ունեցող պոպուլյացիային կամ պոպուլյացիաներին:

7.3. Համաձայնագրի քարտուղարությունը, Տեխնիկական կոմիտեի հետ համաձայնեցված և տարածաշրջանի պետությունների մասնագետների օգնությամբ, պետք է համակարգի սույն Համաձայնագրի IV Հոդվածի 4 մասին համապատասխան պահպանության ուղղեցույցի մշակումը՝ Կողմերին սույն Գործողության ծրագրի իրականացումը օժանդակելու նպատակով: Համաձայնագրի քարտուղարությունը, ուր հնարավոր է, պետք է ապահովի կապը այլ միջազգային պայմանագրերի ներքո սահմանված ուղղեցույցների հետ: Այս պահպանության ուղղեցույցերը պետք է նպատակ ունենան կայուն օգտագործման հիմունքների ներմուծումը: Նրանք, ի միջի այլոց, պետք է ներառեն.

(ա) առանձին տեսակների գործողության ծրագրեր.

(բ) միջոցառումներ արտակարգ իրավիճակներում.

(գ) տարածքների գույքագրման և բնակավայրերի կառավարման մեթոդների նախապատրաստում.

(դ) որսորդության հրահանգներ.

(ե) ջրլող թռչունների առևտուր.

(զ) տուրիզմ.

(է) ցանքերին վնասի նվազեցում. և

(ը) ջրլող թռչունների դիտանցման արձանագրություն:

7.4. Համաձայնագրի քարտուղարությունը, Տեխնիկական կոմիտեի և Կողմերի հետ համաձայնեցված, պետք է պատրաստի այս Գործողության ծրագրի իրականացմանը անհրաժեշտ միջազգային ամփոփագրերի շարք, ներառյալ.

(ա) հաշվետվություններ պոպուլյացիաների կարգավիճակի և դրա միտումների մասին.

(բ) հակասություններ ուսումնասիրությունների տեղեկատվության մեջ.

(գ) յուրաքանչյուր պոպուլյացիայի կողմից օգտագործվող տարածքների ցանցերի, այդ թվում յուրաքանչյուր տարածքի պահպանման կարգավիճակի, ինչպես նաև յուրաքանչյուր դեպքում ձեռնարկված կառավարման միջոցառումների ամփոփումներ.

(դ) սույն Համաձայնագրի 2 Հավելվածում թվարկված տեսակների որսին և առևտրին վերաբերվող յուրաքանչյուր երկրի օրենսդրությունը.

(ե) առանձին տեսակի գործողության ծրագրի նախապատրաստման և իրականացման փուլը.

(զ) վերականգնման ծրագրեր, և

(է) ոչ բնորոշ ջրլող թռչունների և նրանց խառնածոնունդների վիճակը:

7.5. Համաձայնագրի քարտուղարությունը պետք է ձգտի ապահովել 7.4. ենթամասում նշված ամփոփագրերի լրամշակումը երեք տարվա ժամանակահատվածից ոչ ավելին:

7.6. Տեխնիկական կոմիտեն պետք է գնահատի 7.3. և 7.4. ենթամասերի ներքո նախապատրաստված ուղղեցույցները և ամփոփագրերը, պետք է ձևակերպի դրանց մշակմանը, բովանդակությանը և իրականացմանը վերաբերվող հանձնարարականների և բանաձևերի նախագծերը Կողմերի ժողովի նիստերի քննարկման համար:

7.7. Համաձայնագրի քարտուղարությունը պետք է կանոնավորապես ձեռնարկի այս Գործողության ծրագրի իրականացման համար լրացուցիչ միջոցներ (դրամական և տեխնիկական օգնություն) հայթայթող հնարավոր մեխանիզմների ամփոփումներ և զեկուցի Կողմերի ժողովի յուրաքանչյուր հերթական նիստերին:

Աղյուսակ 1: Միզրացվող ջրային թռչունների պոպուլյացիաների կարգավիճակը

ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Աղյուսակ 1-ի հետևյալ սկզբունքներն են հանդիսանում Գործողությունների ծրագրի իրականացման հիմքը

Սյունակ A

- Կարգ 1. (a) Կոնվենցիայի Հավելված 1-ում ներառված տեսակները.
(b) Բնության և բնական ռեսուրսների պահպանության միջազգային միության (IUCN) վտանգված կենդանիների Կարմիր գրքում (Groombridge 1993) որպես վտանգված թվարկված տեսակները. կամ
(c) Պոպուլյացիաներ, որոնց քանակը 10000 առանձնյակներից պակաս է:
- Կարգ 2. Պոպուլյացիաներ, որոնց քանակը 10000 և 25000 առանձնյակների միջև է:
- Կարգ 3. Պոպուլյացիաներ, որոնց քանակը 25000 և 100000 առանձնյակների միջև է և համարվում են վտանգված քանի որ՝
(a) տարեկան կյանքի ցիկլի որևէ փուլում կուտակվում են փոքրաթիվ տարածքներում.
(b) կախում ունեն լրջորեն վտանգված բնակավայրի տիպից.
(c) ցուցաբերում են քանակի երկարատև նվազեցում. կամ
(d) ցուցաբերում են պոպուլյացիայի չափսի ծայրահեղ տատանումներ կամ դրա տենդենցներ

Վերը 2 և 3 Կարգերում նշված տեսակների համար տես սույն Հավելվածի 2.1.1 պարբերությունը

Սյունակ B

- Կարգ 1. Պոպուլյացիաներ, որոնց քանակը 25000 և 100000 առանձնյակների միջև է և որոնք չեն համապատասխանում Սյունակ A-ում վերը նկարագրված պայմաններին.
- Կարգ 2. Պոպուլյացիաներ, որոնց քանակը 100000 առանձնյակներից բարձր է և համարվում են հատուկ ուշադրության կարիք ունեցող, քանի որ.
(a) տարեկան կյանքի ցիկլի որևէ փուլում կուտակվում են փոքրաթիվ տարածքներում.
(b) կախում ունեն լրջորեն վտանգված բնակավայրի տիպից.
(c) ցուցաբերում են քանակի երկարատև նվազեցում. կամ
(d) ցուցաբերում են պոպուլյացիայի չափսի լայն տատանումներ կամ դրա տենդենցներ

Սյունակ C

- Կարգ 1. Պոպուլյացիաներ, որոնց քանակը 100000 առանձնյակներից բարձր է և որոնք կարող են նշանակալիորեն շահել միջազգային համագործակցությունից և որոնք չեն համապատասխանում Սյունակ A-ում և Սյունակ B-ում վերը նկարագրված պայմաններին:

ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Այս Աղյուսակը պետք է՝

- (a) պարբերաբար վերանայվի Տեխնիկական կոմիտեի կողմից սույն Պայմանագրի Հոդված VII-ի, 3(b) պարբերությանը համապատասխան. և
- (b) կլրացվի անհրաժեշտ լինելիս Կողմերի ժողովի կողմից սույն Պայմանագրի Հոդված VI-ի, 9(d) պարբերությանը համապատասխան, այդպիսի վերանայումների եզրակացությունների լուսի ներքո:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆՇԱՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

- bre. բազմացող
- win. ձմեռող
- N. հյուսիսային
- E. արևելյան
- S. հարավային
- W. արևմտյան
- NE. հյուսիսարևելյան
- NW. հյուսիսարևմտյան
- SE. հարավարևելյան
- SW. հարավարևմտյան
- (). պոպուլյացիայի վիճակը անհայտ է: Պահպանության վիճակը ենթադրվում է:
- *. տես 2.1.1 պարբերականը

ՆՇՈՒՄՆԵՐ

1. Աղուսակ 1-ի լրացման համար օգտագործված պոպուլյացիաների տվյալները համապատասխանում են, որքանով որ դա հնարավոր է, Պայմանագրի տարածաշրջանում ներունակ բազմացող պաշարների առանձնյակների քանակին: Կարգավիճակը հիմնվում է պոպուլյացիաների հաշվարկված քանակի առկա լավագույն տպագրված տվյալներով:
2. Թվարկված պոպուլյացիաների (bre) կամ (win) հապավումները վերաբերում են միայն պոպուլյացիաների նույնացման համար: Նրանք չեն մասնանշում գործողությունների սեզոնային սահմանափակումները սույն Պայմանագրի և Գործողությունների պլանի պոպուլյացիաների նկատմամբ:

	A	B	C
<i>Gavia stellata</i>			
- NW Եվրոպա (win)		2c	
- Կասպից լիճ, Սև ծով և E Միջերկրական ծով (win)		(1)	
<i>Gavia arctica arctica</i>			
- W Սիբիր / Եվրոպա		2c	
<i>Gavia arctica suschkini</i>			
- Կենտրոնական Սիբիր / Կասպից լիճ			(1)
<i>Gavia immer</i>			
- Եվրոպա (win)	1c		
<i>Gavia adamsii</i>			
- N Եվրոպա (win)	(2)		
<i>Podiceps grisegena grisegena</i>			
- NW Եվրոպա (win)		1	
- Սև ծով և Միջերկրական ծով (win)		(1)	
- Կասպից լիճ (win)	2		
<i>Podiceps auritus auritus</i>			
- NW Եվրոպա (մեծակտուց)	1c		
- NE Եվրոպա (փոքրակտուց)		1	
- Կասպից լիճ և S Ասիա (win)	2		
<i>Pelecanus onocrotalus</i>			
- Եվրոպա և W Ասիա (bre)	1a 3c		
<i>Pelecanus crispus</i>			
- Սև ծով և Միջերկրական ծով (win)	1a 1b 1c		
- SW Ասիա և S Ասիա (win)	1a 1b 2		
<i>Phalacrocorax pygmaeus</i>			
- Սև ծով և Միջերկրական ծով	2		

- SW Ասիա			1	
<i>Phalacrocorax nigrogularis</i>				
- Պարսից ծոց և Արաբական ծով			2a (2c)	
<i>Egretta vinaceigula</i>				
- S Աֆրիկա	1b 1c			
<i>Ardea purpurea purpurea</i>				
- W Միջերկրական ծով (bre)	2			
- E Եվրոպա և SW Ասիա (bre)			(2c)	
<i>Casmerodius albus albus</i>				
- Սև ծով և Միջերկրական ծով (win)	2			
- SW Ասիա (win)			(1)	
<i>Ardeola idae</i>				
- Մադագասկար և Ալդարբրա (bre)	1c			
<i>Ardeola rufiventris</i>				
- Արևադարձային E և S Աֆրիկա			(1)	
<i>Ixobrychus minutus minutus</i>				
- Եվրոպա և N Աֆրիկա (bre)			2c	
- W և SW Ասիա (bre)			(1)	
<i>Ixobrychus sturmii</i>				
- Մերձսահարյան Աֆրիկա			(1)	
<i>Botaurus stellaris stellaris</i>				
- Եվրոպա (bre)	3c			
- SW Ասիա (win)	2			
<i>Mycteria ibis</i>				
- Մերձսահարյան Աֆրիկա			1	
<i>Ciconia nigra</i>				
- SW Եվրոպա / W Աֆրիկա	1c			
- Կենտրոնական և E Եվրոպա (bre)	2			
<i>Ciconia episcopus microscelis</i>				
- Արևադարձային Աֆրիկա			1	
<i>Ciconia ciconia ciconia</i>				
- S Աֆրիկա	1c			
- Իբերիա և NW Աֆրիկա (bre)	3b			
- Կենտրոնական և E Եվրոպա (bre)			2c	
- SW Ասիա (win)	3b			
- Կենտրոնական և SE Եվրոպա (bre)	2			
<i>Plegadis falcinellus falcinellus</i>				
- Մերձսահարյան Աֆրիկա (bre)				(1)
- Սև ծով և Միջերկրական ծով / W Աֆրիկա	(3c)	1		
- SW Ասիա / E Աֆրիկա	2*	(1)		
<i>Geronticus eremita</i>				
- Մարոկկո	1a 1b 1c			
- SW Ասիա	1a 1b 1c			
<i>Threskiornis aethiopicus aethiopicus</i>				
- Մերձսահարյան Աֆրիկա			1	
- Իրաք և Իրան	1c			
<i>Platalea leucorodia leucorodia</i>				
- E Ատլանտիկա	1c			
- Կենտրոնական և SE Եվրոպա (bre)	2			
<i>Platalea leucorodia archeri</i>				
- Կարմիր ծով	1c			
<i>Platalea leucorodia major</i>				
- SW և S Ասիա (win)	2			
<i>Platalea alba</i>				
- Մերձսահարյան Աֆրիկա	2*			
<i>Phoenicopterus ruber roseus</i>				
- W Աֆրիկա	3a			
- E Աֆրիկա	3a 3c			
- S Աֆրիկա	3a 3c			
- W Միջերկրական ծով	3a			

- E Միջերկրական ծով, SW և S Ասիա		2a	
<i>Phoenicopterus minor</i>			
- W Աֆրիկա	2		
- E Աֆրիկա		2a 2c	
- S Աֆրիկա	3a 3c		
<i>Dendrocygna bicolor</i>			
- W Աֆրիկա			(1)
- E և S Աֆրիկա			(1)
<i>Dendrocygna viduata</i>			
- W Աֆրիկա			1
- E և S Աֆրիկա			1
<i>Thalassornis leuconotus leuconotus</i>			
- W Աֆրիկա	1c		
- E և S Աֆրիկա	2*		
<i>Oxyura leucocephala</i>			
- W Միջերկրական ծով	1a 1b 1c		
- Ալժիր և Թունիս	1a 1b 1c		
- E Միջերկրական ծով, Թուրքիա և SW Ասիա	1a 1b 2		
<i>Cygnus olor</i>			
- NW Մեյնլենդ և Կենտրոնական Եվրոպա		2d	
- Սև ծով		1	
- W և Կենտրոնական Ասիա / Կասպից լիճ		2a 2d	
<i>Cygnus cygnus</i>			
- Իսլանդիա / Միացյալ Թագավորություն և Իրլանդիա	2		
- NW Մեյնլենդ և Եվրոպա		1	
- N Եվրոպա և W Սիբիր / Սև ծով և E Միջերկրական ծով	2		
- W և Կենտրոնական Սիբիր / Կասպից լիճ	2		
<i>Cygnus columbianus bewickii</i>			
- W Սիբիր և NE Եվրոպա / NW Կասպից լիճ		1	
- N Սիբիր / Կասպից լիճ	1c		
<i>Anser brachyrhynchus</i>			
- E Գրենլանդիա և Իսլանդիա / Միացյալ Թագավորություն		2a	
- Սվալբարդ / NW Եվրոպա		1	
<i>Anser fabalis fabalis</i>			
- W Սիբիր և NE Եվրոպա / NW Եվրոպա		1	
<i>Anser fabalis rossicus</i>			
- W և Կենտրոնական Սիբիր / NE և SW Եվրոպա			(1)
<i>Anser albifrons albifrons</i>			
- NW Սիբիր և NE Եվրոպա / NW Եվրոպա			1
- W Սիբիր / Կենտրոնական Եվրոպա	3c*		
- W Սիբիր / Սև ծով և Թուրքիա			1
- N Սիբիր / Կասպից լիճ և Իրաք	2		
<i>Anser albifrons flavirostris</i>			
- Գրենլանդիա / Իրլանդիա և Միացյալ Թագավորություն	3a*		
<i>Anser erythropus</i>			
- N Եվրոպա և W Սիբիր / Սև ծով և Կասպիս լիճ	1a 1b 2		
<i>Anser anser anser</i>			
- Իսլանդիա / Միացյալ Թագավորություն և Իրլանդիա		1	
- NW Եվրոպա / SW Եվրոպա			1
- Կենտրոնական Եվրոպա / N Աֆրիկա	2*		
<i>Anser anser rubrirostris</i>			
- Սև ծով և Թուրքիա		1	
- W Սիբիր / Կասպից լիճ և Իրաք			1
<i>Branta leucopsis</i>			
- E Գրինլանդիա / Շոտլանդիա և Իրլանդիա		1	
- Սվալբարդ / SW Շոտլանդիա	2		
- Ռուսաստան / Գերմանիա և Նիդերլանդներ			1
<i>Branta bernicla bernicla</i>			
- W Սիբիր / W Եվրոպա		2b	
<i>Branta bernicla hrota</i>			

- Սվալբառոդ / Դանիա և Միացյալ Թագավորություն	1c		
- Կանադա / Իրլանդիա	2		
<i>Branta ruficollis</i>			
- Ն Սիբիր / Սև ծով և Կասպից լիճ	1a 1b 3a		
<i>Alopochen aegyptiacus</i>			
- Վ Աֆրիկա	2		
- Ե և Տ Աֆրիկա			(1)
<i>Tadorna ferruginea</i>			
- ՆՎ Աֆրիկա	1c		
- Ե Միջերկրական ծով և Սև ծով / ՆԵ Աֆրիկա	2		
- Վ Ասիա և Կասպից լիճ / Իրան և Իրաք		1	
<i>Tadorna cana</i>			
- Տ Աֆրիկա		1	
<i>Tadorna tadorna</i>			
- ՆՎ Եվրոպա		2a	
- Սև ծով և Միջերկրական ծով		1	
- Վ Ասիա / Կասպից լիճ և Միջին Արևելք		1	
<i>Plectropterus gambensis gambensis</i>			
- Վ Աֆրիկա	3c		
- Ե Աֆրիկա			1
<i>Plectropterus gambensis niger</i>			
- Տ Աֆրիկա		1	
<i>Sarkidiornis melanotos melanotos</i>			
- Վ Աֆրիկա		1	
- Տ և Ե Աֆրիկա			1
<i>Nettapus auritus</i>			
- Վ Աֆրիկա	2		
- Տ և Ե Աֆրիկա			(1)
<i>Anas penelope</i>			
- Վ Սիբիր և ՆԵ Եվրոպա / ՆՎ Եվրոպա			1
- Վ Սիբիր և ՆԵ Եվրոպա / Սև ծով և Միջերկրական ծով		2c	
- Վ Սիբիր / ՏՎ Ասիա և ՆԵ Աֆրիկա		2c	
<i>Anas strepera strepera</i>			
- ՆՎ Եվրոպա		1	
- ՆԵ Եվրոպա / Սև ծով և Միջերկրական ծով		2c	
- Վ Սիբիր / ՏՎ Ասիա և ՆԵ Աֆրիկա			(1)
<i>Anas crecca crecca</i>			
- ՆՎ Եվրոպա			1
- Վ Սիբիր և ՆԵ Եվրոպա / Սև ծով և Միջերկրական ծով			1
- Վ Սիբիր / ՏՎ Ասիա և ՆԵ Աֆրիկա		2c	
<i>Anas capensis</i>			
- Ե Աֆրիկայից մինչև Վ Աֆրիկա	2		
- Տ Աֆրիկա			1
<i>Anas platyrhynchos platyrhynchos</i>			
- ՆՎ Եվրոպա			1
- Ն Եվրոպա / Վ Միջերկրական ծով			1
- Ե Եվրոպա / Սև ծով և Միջերկրական ծով		2c	
- Վ Սիբիր / ՏՎ Ասիա			(1)
<i>Anas undulata undulata</i>			
- Տ Աֆրիկա			1
<i>Anas acuta</i>			
- ՆՎ Եվրոպա		1	
- Վ Սիբիր, ՆԵ և Ե Եվրոպա / Տ Եվրոպա և Վ Աֆրիկա		2c	
- Վ Սիբիր / ՏՎ Սիբիր և Ե Աֆրիկա			(1)
<i>Anas erythrorhyncha</i>			
- Տ Աֆրիկա			1
- Ե Աֆրիկա			1
- Մադագասկար	2		
<i>Anas hottentota</i>			
- Վ Աֆրիկա	1c		

- E Աֆրիկա			1
- S Աֆրիկա		1	
Anas querquedula			
- W Սիբիր և Եվրոպա / W Աֆրիկա		2c	
- W Սիբիր / SW Ասիա, NE և E Աֆրիկա			(1)
Anas clypeata			
- NW և Կենտրոնական Եվրոպա (win)		1	
- W Սիբիր, NE և E Եվրոպա / S Եվրոպա և W Աֆրիկա		(2c)	
- W Սիբիր / SW Ասիա, NE և E Աֆրիկա		2c	
Marmaronetta angustirostris			
- W Միջերկրական ծով / W Աֆրիկա		1a 1b 1c	
- E Միջերկրական ծով		1a 1b 1c	
- SW Ասիա		1a 1b 2	
Netta rufina			
- SW և Կենտրոնական Եվրոպա / W Միջերկրական ծով		2*	
- Սև ծով և E Միջերկրական ծով		3c	
- W և Կենտրոնական Ասիա / SW Ասիա			1
Netta erythrophthalma brunnea			
- S և E Աֆրիկա			(1)
Aythya ferina			
- NE Եվրոպա / NW Եվրոպա		2c	
- Կենտրոնական և NE Եվրոպա / Սև ծով և E Միջերկրական ծով		2c	
- W Սիբիր / SW Ասիա		(2c)	
Aythya nyroca			
- W Միջերկրական ծով /W Աֆրիկա		1a 1b 1c	
- E Եվրոպա / E Միջերկրական ծով և Աֆրիկա		1a 1b 3c	
- W Ասիա /SW Ասիա և NE Աֆրիկա		1a 1b 1c	
Aythya fuligula			
- NW Եվրոպա (win)			1
- Կենտրոնական Եվրոպա, Սև ծով և E Միջերկրական ծով (win)			1
- W Սիբիր / SW Ասիա և NE Աֆրիկա			(1)
Aythya marila marila			
- N Եվրոպա / W Եվրոպա			1
- W Սիբիր / Սև ծով և Կասպից լիճ			1
Somateria mollissima mollissima			
- Բալթիկ, Դանիա և Նիդեռլանդներ			1
- Նորվեգիա և Ռուսաստան			1
Somateria mollissima islandica			
- Սվալբարդ և Ֆրանց Իոսիֆ (bre)		1	
Somateria spectabilis			
- E Գրենլանդիա, NE Եվրոպա և W Սիբիր			1
Polysticta stelleri			
- W Սիբիր / NE Եվրոպա	1a 1b	1	
Clangula hyemalis			
- Իսլանդիա և Գրենլանդիա			1
- W Սիբիր / N Եվրոպա			1
Melanitta nigra nigra			
- W Սիբիր և N Եվրոպա /W Եվրոպա և NW Աֆրիկա		2a	
Melanitta fusca fusca			
- W Սիբիր և N Եվրոպա / NW Եվրոպա		2a	
- Սև ծով և Կասպից լիճ	1c		
Bucephala clangula clangula			
- NW և Կենտրոնական Եվրոպա (win)			1
- NE Եվրոպա / Ադրիատիկ ծով		1	
- W Սիբիր և NE Եվրոպա / Սև ծով	2		
- W Սիբիր / Կասպից լիճ	2		
Mergellus albellus			
- NW և Կենտրոնական Եվրոպա (win)	3a		
- NE Եվրոպա / Սև ծով և E Միջերկրական ծով		1	
- W Սիբիր / SW Ասիա		1	

<i>Mergus serrator serrator</i>			
- NW և Կենտրոնական Եվրոպա (win)			1
- NE Եվրոպա / Սև ծով և E Միջերկրական ծով		1	
- W Սիբիր / SW և Կենտրոնական Ասիա	1c		
<i>Mergus merganser merganser</i>			
- NW և Կենտրոնական Եվրոպա (win)			1
- NE Եվրոպա / Սև ծով	1c		
- W Սիբիր / Կասպից ծով	2		
<i>Grus leucogeranus</i>			
- Իրան (win)	1a 1b 1c		
<i>Grus virgo</i>¹			
- Սև ծով (bre)	1c		
- Թուրքիա (bre)	1c		
- Կալմիկիա (bre)		1	
<i>Grus paradisea</i>			
- Անենահարավային S Աֆրիկա	1b 2		
<i>Grus carunculatus</i>			
- Անենահյուսիսային S Africa	1b 2		
<i>Grus grus</i>			
- NW Եվրոպա (bre)		1	
- NE և Կենտրոնական Եվրոպա (bre)		1	
- Սև ծով և E Միջերկրական ծով (win)	3c		
- Սև ծով և Թուրքիա (bre)	1c		
- SW Ասիա (win)	3c		
<i>Sarothrura boehmi</i>			
- Կենտրոնական Աֆրիկա	(3b)		
<i>Porzana parva parva</i>			
- W Եվրասիա / Աֆրիկա		2c	
<i>Porzana pusilla intermedia</i>			
- Եվրոպա (bre)	2		
<i>Porzana porzana</i>			
- Եվրոպա /Africa		2c	
<i>Aenigmatolimnas marginalis</i>			
- Մերձսահարյան Աֆրիկա		(2b)	
<i>Fulica atra atra</i>			
- Սև ծով և Միջերկրական ծով (win)			1
<i>Dromas ardeola</i>			
- NW Հնդկական օվկիանոս, Կարմիր ծով և Պարսից ծոց	3a		
<i>Himantopus himantopus himantopus</i>			
- Մերձսահարյան Աֆրիկա (bre)			(1)
- W Միջերկրական ծով (bre)		1	
- Սև ծով և E Միջերկրական ծով (bre)		1	
- SW Ասիա (win)	2		
<i>Recurvirostra avosetta</i>			
- S Աֆրիկա (bre)	2		
- E Աֆրիկա (bre)		(1)	
- W Եվրոպա և W Միջերկրական ծով (bre)		1	
- Սև ծով և E Միջերկրական ծով (bre)	(3c)		
- W և SW Ասիա / E Աֆրիկա	2		
<i>Glareola pratincola pratincola</i>			
- W Միջերկրական ծով (bre)	2		
- Սև ծով և E Միջերկրական ծով (bre)	2		
- SW Ասիա (bre)		(1)	
<i>Glareola nordmanni</i>			
- W և Կենտրոնական Ասիա /E և S Աֆրիկա		2b 2c	
<i>Pluvialis apricaria</i>			
- Իսլանդիա և Ֆարերյան կղզիներ / E Ատլանտիկա			1
- N Եվրոպա / W Եվրոպա և NW Աֆրիկա			1
- Միացյալ Թագավորություն, Իրլանդիա, Դանիա և Գերմանիա (bre)	3c*		
- W Սիբիր (bre)		(1)	

<i>Pluvialis squatarola</i>			
- E Ատլանտիկա (win)			1
- SW Ասիա և E Աֆրիկա (win)	1		
<i>Charadrius hiaticula hiaticula</i>			
- Եվրոպա և N Աֆրիկա (win)	1		
- W Աֆրիկա (win)			(1)
<i>Charadrius hiaticula tundrae</i>			
- SW Ասիա, E և S Աֆրիկա (win)			(1)
<i>Charadrius dubius curonicus</i>			
- Եվրոպա / W Աֆրիկա			1
- W և SW Ասիա / E Աֆրիկա			(1)
<i>Charadrius pecuarius pecuarius</i>			
- Մերձսահարյան Աֆրիկա			(1)
<i>Charadrius tricollaris tricollaris</i>			
- S և E Աֆրիկա			(1)
<i>Charadrius forbesi</i>			
- W և Կենտրոնական Աֆրիկա	(1)		
<i>Charadrius pallidus pallidus</i>			
- S Աֆրիկա	1c		
<i>Charadrius pallidus venustus</i>			
- E Աֆրիկա	(2c)		
<i>Charadrius alexandrinus alexandrinus</i>			
- E Ատլանտիկա	3c		
- Սև ծով և E Միջերկրական ծով (bre)	3c		
- SW Ասիա և NE Աֆրիկա (win)			(1)
<i>Charadrius marginatus tenellus</i>			
- S և E Աֆրիկա	(1)		
<i>Charadrius marginatus mechowii</i>			
- W և կենտրոնական Աֆրիկա	(1)		
<i>Charadrius mongolus pamirensis</i>			
- SW Ասիա և E Աֆրիկա (win)	(1)		
<i>Charadrius leschenaultii columbinus</i>			
- Սև ծով և E Միջերկրական ծով (bre)	1c		
<i>Charadrius leschenaultii crassirostris</i>			
- SW Ասիա և E Աֆրիկա (win)	(1)		
<i>Charadrius asiaticus</i>			
- W Ասիա / E և S Աֆրիկա	3c		
<i>Eudromias morinellus</i>			
- Եվրոպա (bre)	2c		
- Ասիա (bre)	(1)		
<i>Vanellus vanellus</i>			
- Եվրոպա (bre)	2c		
- W Ասիա (bre)			(1)
<i>Vanellus spinosus</i>			
- Սև ծով և Միջերկրական ծով (bre)	1		
<i>Vanellus albiceps</i>			
- W և Կենտրոնական Աֆրիկա	(1)		
<i>Vanellus senegallus senegallus</i>			
- W Աֆրիկա	(1)		
<i>Vanellus senegallus solitaneus</i>			
- SW Աֆրիկա	(1)		
<i>Vanellus senegallus lateralis</i>			
- E և SE Աֆրիկա	(1)		
<i>Vanellus lugubris</i>			
- SW W Աֆրիկա / Կենտրոնական և E Աֆրիկա	(1)		
<i>Vanellus melanopterus minor</i>			
- S Աֆրիկա	(1)		
<i>Vanellus coronatus coronatus</i>			
- E Աֆրիկա			(1)
- Կենտրոնական Աֆրիկա	(1)		

<i>Vanellus coronatus xerophilus</i>			
- SW Աֆրիկա			(1)
<i>Vanellus superciliosus</i>			
- W և Կենտրոնական Աֆրիկա	(2)		
<i>Vanellus gregarius</i>²			
- W Ասիա / NE Աֆրիկա	1a 1b 1c		
<i>Vanellus leucurus</i>			
- SW Ասիա և NE Աֆրիկա (win)		1	
<i>Gallinago media</i>			
- Ականդինավիա (bre)		1	
- W Սիբիր և NE Եվրոպա (bre)		2c	
<i>Gallinago gallinago gallinago</i>			
- Եվրոպա (bre)		2c	
- W Սիբիր (bre)			1
- Իսլանդիա (bre) (<i>faroeensis</i>)			1
<i>Lymnocyptes minimus</i>			
- Եվրոպա (bre)	(3c)*		
- W Սիբիր (bre)		(1)	
<i>Limosa limosa limosa</i>			
- W Եվրոպա / W Աֆրիկա		2c	
- E Եվրոպա / E Աֆրիկա		2c	
- SW Ասիա և NE Աֆրիկա (win)		(1)	
<i>Limosa limosa islandica</i>			
- Իսլանդիա (bre)	3a*		
<i>Limosa lapponica lapponica</i>			
- W Պալեարկտիկա (win)		2a	
- W և SW Աֆրիկա (win)		2a	
- SW Ասիա և E Աֆրիկա (win)			(1)
<i>Numenius phaeopus phaeopus</i>			
- Եվրոպա / W Աֆրիկա			1
- W Սիբիր / S և E Աֆրիկա			(1)
<i>Numenius phaeopus alboaxillaris</i>³			
- SW Ասիա / E Աֆրիկա	1c		
<i>Numenius tenuirostris</i>			
- Պարսիկ ծոց, Միջերկրական ծով և Մարոկկո (win)	1a 1b 1c		
<i>Numenius arquata arquata</i>			
- Եվրոպա (bre)			1
<i>Numenius arquata orientalis</i>			
- SW Ասիա և E Աֆրիկա (win)	3c		
<i>Tringa erythropus</i>			
- Եվրոպա / W Աֆրիկա			(1)
- SW Ասիա և E Աֆրիկա (win)		(1)	
<i>Tringa totanus totanus</i>			
- E Ատլանտիկա (win)		2c	
- E Եվրոպա / E Միջերկրական ծով և Աֆրիկա		2c	
<i>Tringa totanus ussuriensis</i>			
- SW Ասիա և E Աֆրիկա (win)			(1)
<i>Tringa totanus robusta</i>			
- Իսլանդիա և Ֆարերյան կղզիներ (bre)			1
<i>Tringa stagnatilis</i>			
- Եվրոպա / W Աֆրիկա		(1)	
- SW Ասիա և E և S Աֆրիկա (win)		(1)	
<i>Tringa nebularia</i>			
- Եվրոպա / W Աֆրիկա			1
- SW Ասիա և E և S Աֆրիկա (win)			(1)
<i>Tringa ochropus</i>			
- Եվրոպա / W Աֆրիկա			1
- SW Ասիա և E Աֆրիկա (win)			(1)
<i>Tringa glareola</i>			
- Եվրոպա (bre)		2c	

- SW Ասիա, E և S Աֆրիկա (win)			(1)
<i>Tringa cinerea</i>			
- SW Ասիա և Աֆրիկա (win)		1	
<i>Tringa hypoleucos</i>			
- Եվրոպա (bre)			1
- SW Ասիա և E Աֆրիկա (win)			(1)
<i>Arenaria interpres interpres</i>			
- W Պալեարկտիկա (win)		1	
- W Աֆրիկա (win)		1	
- SW Ասիա, E և S Աֆրիկա (win)		(1)	
<i>Calidris tenuirostris</i>			
- SW Ասիա և W և S Ասիա (win)	1c		
<i>Calidris canutus canutus</i>			
- W և S Աֆրիկա (win)		2a 2c	
<i>Calidris canutus islandica</i>			
- NE Կանադա և Գրենլանդիա / NW Եվրոպա		2a	
<i>Calidris alba</i>			
- E Արևմտիկա, W և S Աֆրիկա (win)			1
- SW Ասիա, E և S Աֆրիկա (win)			(1)
<i>Calidris minuta</i>			
- Եվրոպա և W Աֆրիկա (win)			1
- SW Ասիա, E և S Աֆրիկա (win)			(1)
<i>Calidris temminckii</i>			
- Եվրոպա / W Աֆրիկա		(1)	
- SW Ասիա և E Աֆրիկա (win)		(1)	
<i>Calidris maritima</i>			
- E Արևմտիկա (win)		1	
<i>Calidris alpina alpina</i>			
- N Սիբիր / Եվրոպա և N Աֆրիկա		2c	
- SW Ասիա և NE Աֆրիկա (win)			(1)
<i>Calidris alpina schinzii</i>			
- Իսլանդիա և Գրենլանդիա (bre)			1
- Բալթիկա, Միացյալ Թագավորություն և Իրլանդիա (bre)	3c		
<i>Calidris alpina arctica</i>			
- Գրենլանդիա (bre)	2		
<i>Calidris ferruginea</i>			
- SW Եվրոպա և W Աֆրիկա (win)			1
- SW Ասիա, E և S Աֆրիկա (win)			1
<i>Limicola falcinellus falcinellus</i>			
- N Եվրոպա / SW Ասիա և E Աֆրիկա	3c		
<i>Philomachus pugnax</i>			
- W Աֆրիկա (win)		2c	
- SW Ասիա, E և S Աֆրիկա (win)			(1)
<i>Phalaropus lobatus</i>			
- W Եվրասիա (bre)			1
<i>Phalaropus fulicaria</i>			
- Ատլանտիկայի Աֆրիկյան ծովափները (win)			(1)
<i>Larus leucophthalmus</i>			
- Կարմիր ծով և մոտակա ծովափները	1a 1b 2		
<i>Larus hemprichii</i>			
- Կարմիր ծով, Պարսից ծոց, Արաբիա և E Աֆրիկա		2a	
<i>Larus audouinii</i>			
- Միջերկրական ծով / N և W Աֆրիկայի ծովափները	1a 3a		
<i>Larus armenicus</i>			
- Հայաստան, E Թուրքիա և W Իրան	3a		
<i>Larus ichthyaetus</i>			
- Սև ծով և Կասպից լիճ / SW Ասիա	3a		
<i>Larus genei</i>			
- W Աֆրիկա (bre)	2		
- Սև ծով և E Միջերկրական ծով (bre)		2a	

- W, SW և S Ասիա (bre)		2a
<i>Larus melanocephalus</i>		
- W Եվրոպա, Միջերկրական ծով և NW Աֆրիկա		2a
<i>Sterna nilotica nilotica</i>		
- W Եվրոպա / W Աֆրիկա	2	
- Սև ծով և E Միջերկրական ծով (bre)	2	
- SW Ասիա (win)	2	
<i>Sterna caspia caspia</i>		
- S Աֆրիկա (bre)	1c	
- W Աֆրիկա (bre)	2	
- Եվրոպա (bre)	1c	
- Կասպից լիճ (bre)	1c	
<i>Sterna maxima albidorsalis</i>		
- W Աֆրիկա (bre)	3a	
<i>Sterna bengalensis bengalensis</i>		
- Պարսից ծոց / S Ասիա		2a
<i>Sterna bengalensis par</i>		
- Կարմիր ծով / E Աֆրիկա	3a	
<i>Sterna bengalensis emigrata</i>		
- S Միջերկրական ծով / NW և W Աֆրիկայի ծովափները	1c	
<i>Sterna bergii bergii</i>		
- S Աֆրիկա և Մադագասկար (bre)	2	
<i>Sterna bergii thalassinus</i>		
- E Աֆրիկա և Սեյշելյան կղզիներ (bre)	1c	
<i>Sterna bergii velox</i>		
- Կարմիր ծով և NE Աֆրիկա	3a	
<i>Sterna sandvicensis sandvicensis</i>		
- W Եվրոպա / W Africa		2a
- Սև ծով և E Միջերկրական ծով (bre)		2a (2c)
- SW և S Ասիա (win)		2a
<i>Sterna dougallii dougallii</i>		
- Եվրոպա (bre)	1c	
<i>Sterna hirundo hirundo</i>		
- S և W Եվրոպա (bre)		1
- N և E Եվրոպա (bre)		1
- W Ասիա (bre)		(1)
<i>Sterna paradisaea</i>		
- W Եվրասիա (bre)		1
<i>Sterna albifrons albifrons</i>		
- E Ատլանտիկա (bre)	3b	
- Սև ծով և E Միջերկրական ծով (bre)	3c	
- Կասպից ծով (bre)	2	
<i>Sterna albifrons guineae</i>		
- W Աֆրիկա (bre)	(2)	
<i>Sterna saundersi</i>		
- W և S Ասիա, Կարմիր ծով, Պարսից ծոց և E Աֆրիկա		(1)
<i>Sterna balaenarum</i>		
- S և Կենտրոնական Աֆրիկա, Ատլանտիկա	2	
<i>Sterna repressa</i>		
- W և S Ասիա, Կարմիր ծով, Պարսից ծոց & E Աֆրիկա		2c
<i>Chlidonias leucopterus</i>		
- E Եվրոպա և W Ասիա / Աֆրիկա		2c
<i>Chlidonias niger niger</i>		
- Եվրոպա և Ասիա (bre)		2c

Ծանոթագրություններ Աղյուսակ 1-ին.

1. Այս տեսակը Բոննի կոնվենցիայի II Հավելվածում թվարկված է *Anthropoides virgo* անվան տակ:
2. Այս տեսակը Բոննի կոնվենցիայի I Հավելվածում թվարկված է *Chettusia gregaria* անվան տակ:
3. Որոշ հեղինակների կողմից "*alboaxillaris*" ենթատեսակը համարվում է միայն հիմնայական *phaeopus*-ի գունային ձևը: